

# "ՀամաՀայկական Էջ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ Ընթացակում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

library

ԱՌԵՎՈՐԱԿԱՆ ԿԱՐՈՒՅՈՒՆ ՀԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱՎԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՋՈՒՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՐԱ  
ԸՆԴՐՈՒՅԹԵՐՆԵՐԻ ԳՐԱՅԻ

ԹԵՎԱԿ ՊՐԵԴՐԱ ԽԵՂՄՈՒՄ ՄԱՆՏՈՎԱՆԿԱՆ ԿԱՐՈՒՅՈՒՆ  
ԽՄԱՆ, "ԽՈՎՃԵՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ" ԿՈՎԻՆ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՐՈՒՅՆ ԱՅՆ ՈՐ ՕԳՏԱԼԻՒՄ Են ՄԵՐ ԿԱԶԵՅՆ  
ԸՆԿՈՆԴԻ ԵՎ ՀՈՎՃԻ ԸՆԴՐՈՒՅՆՔՆԵՐՆ




ՎՐԱ ՄԻԱ ՝ freebooks@rambler.ru

ԿԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ



ԱՐՈՒՅՐ  
ՍԵՎԱԿ  
ԲԱՂԱՍՏԵՓՈՒ  
ՍԻՐԱՄԵՐԸ





ԿԱՐԼԵՆ ԴԱՎԻԴՅԱՆ



ԿՐՈՒՅՑ  
ՄԵՎԱԿ  
ԲԱՄԽՈՏԻՇԴ  
ՄԻՐԱԿՐԵ

ԳՄԴ 83. 3 Հ7

Ս 411 դ

Գրախոս՝ բանասիրական գիտությունների դոկտոր  
ԱԼՄԱՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Դաճիելյան Կ. Ա.

Ս 411 դ Պարույր Սևակ բանաստեղծի սիրանը.—Եր.  
Լույս, 1989.—91 էջ:

Գրքույկում պատմվում է Պարույր Սևակի սիրանքի մասին, որ  
կատարեց նա իր պոեզիայով մեր եպության դժվարին տարիներին՝ սո-  
ցիալիստական հասարակությանը մղելով հեղափոխական վերափո-  
խումների անհրաժեշտության գիտակցության:

Գ 4306010400 (6) 24. 1990  
702 (01) 1989

ԳՄԴ 83. 3 Հ 7

ISBN 5-545-00383-5

Կարլեն Արտաշեսովիչ Դանիելյան

ПАРУЙР СЕВАԿ—ПОДВИГ ПОЭТА

(на армянском языке)

Ереван, «Луйс» 1990

© Դաճիելյան Կ. Ա., 1990

## Ե Ր Կ Ո Ւ Ի Ս Ո Ս Ք

Երբ դեռ չէին եկել Վերակառուցման օրերը և բացախոսության ժամանակները և երբ չէր սկսվել աննախապաշտամքար անկեղծությամբ ներկայացվել 1930—50-ական թվականների ստալինյան աղետը և այն մեծ ողբերգությունը, որ ապրեց ու տարավ երկրի մտածող ու խորհող ստեղծագործական մտավորականությունը—մարդիկ, որոնք այդ օրերին, այնուամենայնիվ, մնացին իսկական քաղաքացիական դիրքիրում և կարողացան «զորանոցային սոցիալիզմի» հակառակում անխտական բնույթը մերկացնել, նպաստելով երկրում տիրող հարաբերությունների վերանորոգման դիտակցության մշակման ու ամրապնդման արդեն սկսված, սակայն դեռևս շափազանց թույլ հեղափոխական նախաձեռնումներին—այդ մարդիկ, շնայած բանտ ու աքսորին, զրկանքներին ու հալածանքներին կյանքի դնով կարողացան գեմընթաց գնալ այն ահռելի ուժին, որ կոչվում էր հնագանդվող մեծամասնության կույր պաշտամունք և հավատ:

Մեր երկիրը այսօր առաջ է քաշել սոցիալական և բարոյական վերանորոգության նոր ծրագիր, որի իրականացումը, երևի, հնարավոր կղարձնի ճշմարիտ մարդասիրական ուղիներով առաջ մղել միլիոնավոր մարդկանց ապրուստի ու հացի լուծման խնդիրը։ Հենց այս գործին հիմա էլ աջակից են տասնամյակներ առաջ իրենց ստեղծագործությամբ՝ անտարբերության ու թմրի մեջ ննջող խորհրդային մարդկանց արթնացնելու ճիղերի մեջ սեփական ուժերի մեծ ձասը ծախսած երկրի իսկական ու մեծ զավակները։

Այդ զավակներից էր Պարույր Սևակը, որի կատարած քաղաքացիական-հեղափոխական սխրանքի մասին է պատմում այս գրքույկը։

Հասարակության վերակառուցման այս թեժ օրերին, երբ մեր վիթխարի երկիրը տենդորեն ուղիներ է որոնում սոցիալական զարդացման նոր ափ գուրս գալու և հրաժարվելու ստալինյան անիծյալ ժառանգությունից և առաջին քայլերն է կատարում ժողովրդավարության և ազատության սկզբունքները կյանքի կոչելու ու հաստատելու համար, Պարույր Սեվակը օգնության է հասնում մեզ անսպասելի հայտնությամբ՝ որպես հոգևոր հենարան ու ուժի աղբյուր՝ դիմանալու փորձությանը՝ և հավատալու, և մաքառելու համար, որպեսզի այս երկրի վրա ևս հաստատվի ճշմարտությունն ու արդարությունը, բարությունն ու սերը:

Պարույր Սևակը երկար է տառապել. նրա մեծ, անդնդախոր պոեզիայում հավաքվել է խորհրդային ժողովրդի զբրկանքների ու տառապանքների խուլ տնքոցը, կոկորդում սեղմած ճիշը, հոգևոր և մարմնավոր ստրկության քշված և տանջանքների ենթարկված միլիոնավոր մարդկանց լուսարցունքը, փակ ու խուփ շուրջերի զայրույթի և նվաստացման դառնությունը, անելանելիության հուսահատությունը: Նրա հոգին ու միտքը տարիներ շարունակ կրծել են կասկածի տոնետները՝ տեղ շիտնելով ո՞չ հավատի, ո՞չ էլ առավել ևս լուսավոր ապագայի դալստյան հնարավորության հանդեպ:

«Զորանոցային սոցիալիզմը» նա ամենից լավ է ճանաչել, հասկացել է այն հոգեխարտիշ ծաղր ու ծանակը, որով շրջափակված էր ժամանակակից մարդը։ Այդ նվաստացմանը շի դիմացել։ Տարիներ շարունակ որպես իսկական հեղափոխական մաքառել է կյանքը վերափոխելու համար։

Բացահայտ, թե գաղտնի նրա բանաստեղծության մեջ արտացոլում է զտել ժամանակակից մարդու կյանքի ողբերդականությունը։ Նա հասել է բանաստեղծության այն սահմաններին, երբ ծախսվում են էներգիայի ահռելի բաժիններ, և հավատաքննական դրաֆնության պայմաններում, այնուամենայնիվ, բանաստեղծին հաջողվում է ասել կյանքի ճշմարտությունը, ողեկոշել ժամանակակիցների քնած ուժերը, մղել հեղափոխության։

Գրական այսպիսի անհատականություն Խուսաստանն էլ չունի։ Նա կանգնած է 50—60-ական թվականների պոեզիայի բարձրակետում, իսկ իր քաղաքացիական պոեզիայով առաջ է անցել այդ շրջանի դրեթե բոլոր բանաստեղծներից։

Կա միանդամայն թյուր պատկերացում պոեզիայի քաղաքացիականության մասին. որպես թե կարելի է տիրող կարգերի դեմ ընդդիմամարտություն շունենալ և կատարել իր քաղաքացիական պարտքը դրականության մեջ։ Գրականության քաղաքացիականությունը որոշվում է կյանքը վերափոխելու հեղափոխական գիրքորոշման գաղափարական հոսքերի գեղարվեստական յուրացումներով։ Դրանք, այդ հոսքերը, ներծծվում են գեղարվեստական պատկերի կառուցվածքը, ներթափանցում վերապատկերվածի զգացումայինինտելեկտուալ համակարգը, առաջ քաշվում հազիվ միայն

Ակատիսդ մի ներքին ուժից, որ բանաստեղծի հոգևոր կենտրոնացման հետևանքն է:

Այս բանաստեղծությունը դառնում է մարդու հենարանը, օպնականը և խորհրդատուն միայն ճշմարտության հանդես պարունակած վերաբերմունքով։ Կեղծիքի ու խաբեության հասարակարգը, ուր ասվում էր մի բան և իրադորձվում մի այլ բան, երբ չկային բարոյականության շափանիշներ և մարդասիրության՝ օրենքով պաշտպանված սկզբունքներ, ճշմարտության դատի պաշտպանությունը դառնում էր խիգախների գործը։

Այդ աներկյուղ խիգախներից էր Պարույր Սևակը. նա զարի ժխորը մաղելով, ջոկել էր դարի նվազները։ «Իսկական բանաստեղծությունը, — գրել է նա 1965-ին, պիտի դառնամիայն ճիշտն ու ճշմարիտը, առողջն ու արդարը»։ Դարի նվազները հենվում էին հենց այդ ճշմարտի ու արդարի վրա։

Այրում էր պատմել արաբական գրականությունից մի տասակել տուակ, որ երեխ, ամենից շատ հենց իրեն էր վերաբերում։ Արդարությունն ու Անարդարությունը ճամփա են բնիկնում և նրանց մեջ վեճ է ծագում։ Անարդարությունը սպանում է Արդարությանը և ողջակիզում նրան։ Արդարության յարեկամները որոնումներից հետո գտնում են նրա մոխրացած աճյունը և այդ մոխրից սարքում... թանաք։ Այդ որսանից Արդարությունը մեռած է աշխարհում, — ասում է պրոյցը, — նա ապրում է միայն գրքերի մեջ։

Արդարության մոխրին թանաքով կարելի է միայն ճշշմարտություն գրել, իսկ հակառակն անելը, այսինքն՝ «մակդիրամիոր թի անմակդիր սուտ գրելը առնվազն անբարոյականություն է», — այս էր Պարույր Սևակի խոր համոզումը։

Եվ նա լեռնացավ կեղծիքի ու ստի գրականության դեմ, պատնեշեց գրա ճանապարհը, փրկելով ժամանակակիցներիս պատիվը, մարդկային արժանապատվությունը։ Նա ծառացավ մի հասարակության դեմ, որ նրան չէր կարող չկործանել, որովհետև Պարույր Սևակը զարկում էր նրա հիմքերի հիմքին՝ կեղծիքի ու ստի հիմնասյուներին։

Ժամանակակից երիտասարդությունը շատ բան ունի սրվարելու Պարույր Սևակից, և ամենից առաջ անձնազո՞ր նվիրումով խիզախելու և զոհվելու պատրաստակամությունը, որով նու նետիվեց հասարակությունը վերափոխելու և այն գրկելու գործին։ Պարույր Սևակը շատ լավ էր հասկանում, որ երաշշովի ժամանակ երկրում կատարված բարեփոխությունները արմատական չեն, պաշտու են, կիսատպուատ, և ազատաթյունը կարելի է նվաճել պայքարելով այն «ամեն աճուիլի ոճավարի» զիմ։ որը տանչվում է «ֆաշիզմ» կոչված հասկացաթյան ներ։

Պարույր Սևակը երրիմն լնդում էր Լև Տոլստոյի միտքը, թե զրականությունը «...լուրջ գիտակցությունն է, լուրջ ժողովրդի» և հենց այդ պատճառով է,—ասում էր նա,—որ հայ գրականությունը շատ հաճախ փոխարինել է պետությանն ու ազգային կյանքի վարչությանը։ Այս տեսակետից էր նա նայում նաև իր գրականությանը, որով հույս ուներ օդնել ժամանակակիցներին արդարացի հասարակություն ստեղծելու գործում։

«Литературная газета»-ի 1988 թվականի ապրիլի 16-ի համարում տպագրվեց ԽՍՀՄ Գրողների միության նախագահության նամակը «Պրավդային» («Ավելի շատ հրապարակայնություն, ավելի շատ դեմոկրատիա, ավելի շատ

սոցիալիզմ»): «Սովետական գրողները,—ընդդժում էր նաև մակամ,—քիչ բան չեն արել, որ սոցիալիստական հասարակությունը դա ինքնագիտակցության, հեղափոխական վերափոխումների անհրաժեշտության եղածանդման»:

Իրոք, 70 տարի իզուր չէ ստեղծագործել խորհրդային դրական միտքը: 70 տարիների մեջ ստեղծվել է և այն գրականությունը, որ սոցիալիստական հասարակությանը բերում է ինքնագիտակցության և ինքնաճանաշման, ու նախապատրաստում երկիրը հեղափոխական վերափոխումների ուղիներով ընթանալու: Ճիշտ է, շատ չէին այդ գրողները և ոչ էլ հնարավոր էր նրանց երկերի ազատ հրապարակումը, այնուամենայնիվ, գրողներից ոմանք գտան այն եզրվացույան լեզուն և ստեղծագործական ձևը, որով հնարավոր էր, ինչպես ասում է Պարույր Սևակը, «Հեռվից-հեռու» խոսել ընթերցողի հետ և ասել ճշմարտությունը մեր երկրի հասարակական-սոցիալական հարաբերությունների մասին (Պլատոնով, Մանկելշտամ, Բագրիցկի, Բուլգակով, Պաստեռնակ, Էրենբուրգ և այլք):

Միշտ էլ խորհրդային գրականությունն ունեցել է մեր երկրի սոցիալ-քաղաքական ընթացքի իր ընդդիմախոսներին և այն էլ հանձին ազնիվ ու ճշմարիտ գրողների, որոնք փորձել են քայլել ճշմարտության հետեւյց հումանիստական բարոյականության թելագրանքով: Տառապանքի ուղիներով են անցել նրանք՝ անձնական բռնադատումներից, որ գործադրվել են նրանց նկատմամբ՝ մինչև բանտ ու աքսոր, մինչև նույնիսկ ամեն տեսակ հաշվեհարդար ու սպանություն: Յուրաքանչյուր ընդդիմախոսություն դիտվել է հակախորհըր-

դային, հակասոցիալիստական, ճիշտ այն ոգով, որ բանաձեռէ  
է Պարույր Սևակը.

Այս կյանքի համար հպացի՞ր՝  
Պիղծ ես,  
Ե՛վ անօրեն ես,  
Ե՛վ բռնադատված.  
«Ամեն ինչ արա հանուն ա՛յն կյանքի,  
Որ քեզնից հետո, հետո է դալու»...  
(«Եվ այս մի՝ Մաշտոց անուն»)

Այս էր ստալինյան ժամանակների «գաղափար-կաղա-  
պարի» պրոկրուստյան մահիճը, ուր խցկվում էին միանգա-  
մից ազգերը, ազգաթյունները, ժողովուրդները։ Բոլոր իսկա-  
կան արվեստագիտները անձնապես տպրեցին այդ շրջանի  
ոպրերգությունը իրեն մտածող ու շնչող բանական էակներ,  
որոնց հասկը էր ազեաներից մեծացույնը՝ ազատությունից  
զրկված լինելու մարդկացին դժբախտությունը։

Որդո՞ւղ ես սպում՝  
Ուրեմն պիղծ ես,  
Ողբում սև օ՞րրդ՝  
Ուրեմն պիղծ ես,  
Իրենց իսկ տված ցավի՞ց ես լալիս՝  
Անօրեն ես դու,  
Արժանի մահվան։  
Դավանանք կոչված դավի՞ց ես լալիս՝  
Անօրեն ես դու,  
Արժանի մահվան։

«Մտածիր միայն ա'յն կյանքի մասին,  
Որ քեզնից հետո, հետո է գալու»...  
(«Եվ այր մի՛ Մաշտոց անուն»)

Իսկ այդ կյանքը այն կոմունիզմն էր, ուր թռիչքով մուտք գործելու պատրանքային հավատն ունեին Ստալինը և նրանից հետո եկած մեր երկրի գլխավոր քարտուղարները։ Խորհրդային 280 միլիոնանոց ժողովրդի պետական մեքենան՝ սովի ու աղքատության ճիրաններում, բռնադատումների ու գնդակահարությունների, անօրինականությունների, մարդու իրավունքների բացարձակ բացակայության պայմաններում, շվճարելով մարդկանց, աշխատացնում ու կառուցել էր տալիս երկիրը՝ «...այն կյանքի համար», որ, ինչպես բանաստեղծն էր ասում «...մեզնից հետո, հետո է գալու»։ Դա մեկ սերնդի ողբերգություն շէր և ոչ միայն մեկ ժողովրդին բաժին ընկած ճակատագիր. դա հազարավոր ու միլիոնավոր կյանքեր արժեցավ, ել շենք խոսում բարոյական դիմախեղման այն տվերումների մասին, որ այսօր և դեռ տասնյակ տարիներ հետո էլ իրենց զգացնել են տալու։

Աշխարհի ամենահեղափոխական ուսմունքը զենք դարձրած, մեր երկրում ամենահակահեղափոխական գործերն էին կտտարվում։ Հստ էության, ազատության և հավասարության մարդկային համապատմական երազանքի իրականացման հնարավորություններ ստեղծելու փոխարեն, ստեղծվում էին բռնադատությունների այն միջոցներն ու մեթոդները, որով շղթայվում էին մարդկանց մտածողությունը, հավատքը, տարրական իրավունքներն ու աղատությունները։ Ծնվում էին ու հասարակության առաջաբեմը գրավում կաղապարմած

մարդիկ, ոռբոտային բնավորություններ ու կամակատարներ, որոնց միջոցով իրականացվում էր ժողովրդի ստրկացումը, համատարած բանտի էր վերածվում երկիրը՝ շրջափակվելով դրսի աշխարհից անթափանցելի բետոնապատերով կամ երկաթե վարագույրով։

Զախշախվում էր երկրի ծաղիկը՝ կուսակցության լենինյան սերունդը, մտավորականությունը՝ գրողները, արվեստագետները, գիտնականները, ուզմական էլիտան, ակադեմիկոսներն ու պրոֆեսորները։ Զնդանները լի էին անարդարության զոհերով, անկարեկից հառաշանքներով, անեծքով։ Մրի էր քաշվել մարդկային բանականությունը, ծաղրուծանակի էին ենթարկվում մարդկանց պատիվն ու արժանապատվությունը, ամեն-ամեն ինչ՝ կնոջ և մոր սրբությունից մինչև կոմունիզմին ու սոցիալիզմին նվիրված սրբասուրբ զգացմունքները։ Պաշտամունքի հրեշը վեր էր ելել՝ կափկափելով արյունոտ ժանիքները։ Ամենուրեք այդ հրեշը լափում էր բոլոր ազնիվ ու հավատարիմ մարդկանց, նրանց որդիներին, ազգականներին։ Ասես միտումնավոր ծրագրավորվածությամբ կոտրում էին երկրի ողնաշարը, և հարվածի թակոցը այնքան ուժգին էր ու ահոելի, որ լսելի էր ամբողջ երկրով ու աշխարհով մեկ։

Այդուհանդերձ, այս պայմաններում շարունակվում էր գործել ժրդովրդի ստեղծագործական միտքը։ Ճիշտ է, մարդիկ շատ լավ էին հասկանում, որ բանաստեղծական ներշնչանքի թևերը ամեն անգամ շի կարելի սրածել զգուշավորության և ստրկամտության նշտարով, բայց առանձնության մեջ, բոլորից գաղտնի, ինքն իրեն ծնվում էին մտքեր և պատկերներ, որոնք ակամայից ամենահստակ ու պարզ տեսանե-

իսովիւամբ երկցնում էին կատարվող ու կատարվելիք եղեռ-  
նակործությունների ամբողջ հրեշտավոր բնույթը։

Հոգեոր ստրկության այս ժամանակներում ոչ միայն  
խոսք չէր կարող լինել ստեղծագործական աղատություն-  
ների, այլև ճշմարիտ գեղարվեստական ներշնչանքների մա-  
սին։ Դա կեղեքող հուսահատության և ինքնալլկող օրինապա-  
հության ժամանակաշրջան էր։ Եվ չնայած դրան, երբեք չէր  
կադարձում հոգու և մտքի իսկական շարժումը այն մարդ-

ոնց մեջ, որոնք ժողովրդին բաժին ընկած սոսկալի ճակա-  
տագրով մտահոգ, որոնում էին ելք և ուժի պահեստարան-  
ներ, որ նրանց հնարավորություն կտային նպաստելու բոլոր  
ազնիվ ու ճշմարիտ հոգիներում աստիճանաբար ձև ու կեր-  
պարանք առնող այն մտադրությանն ու վճռականությանը,  
որն ուղղված էր այդ ամենը հեղափոխականորեն շրջափո-  
խելու գործունեությանը։

Պարույր Սևակն այս տեսակետից իսկական երևույթնե-  
րից է ամբողջ խորհրդային գրականության մեջ։ Նրա ստեղ-  
ծագործությունը՝ առաջին թոթովանքներից մինչև վերջին՝  
«Եղիցի լույս» ժողովածուն, հագեցած է ժամանակաշրջանի  
ամենաճշմարիտ ու ամենաազնիվ ընկալմանը զուգահեռվող  
զգայրւթյուններով ու տրամադրություններով, որոնք թարգ-  
մանում էին «զորանոցային կամ ստալինյան սոցիալիզմի» ու-  
ղիներով տասնամյակներ քայլած մի ազնիվ ու որբ հոգու  
շուխոզանց հասկանալի մարդկային տառապանքը։ Դա այն  
ճիշն է, որ դուրս է պոռթկացել ժողովրդի կրծքից, իսաբված,  
ծանակված, խոշտանգված ու դատապարտված ժողովրդի  
կրծքից։

Պարույր Սևակի ստեղծագործությունը խղճի, բարոյականության հարթմնի ձայնն է, որ ինչպես առաջներում, այնպես էլ այս օրերին հնչում է արդարության, ճշմարտության ու սիրո զողանջներով և մեզ ներկայանում որպես մաքրագործող ու առաքինության մղող հոգեոր ուժի արձագանք:

Այն հումանիզմը, ժողովրդի տառապանքով ապրելու այն արդար ու վսեմ կեցվածքը, որ ինքնհատուկ էր բանաստեղծին, երբ անհրաժեշտ էր լինում մարդկանց իր հոգու ներսը առնելու ու գուրգուրելու, այն այլասիրությունը, որով նա սփոփում էր օտարներին՝ սեփական ցավը մոռացած, այն զոհաբերության պատրաստակամությունը, որ նա դուրս էր բերում ժողովրդի վիշտ ու ցավի հանդեպ, այդ ամենը Պարույր Սևակի բանաստեղծությունը յցնում են ժողովրդական հումանիզմի հյութերով, որ 30—40 տարում աստիճանաբար ներծծվել է մեր հանրության բոլոր շերտերը, կազմավորելով մարդկանց վերաբերմունքը ժամանակակից հարաբերությունների նկատմամբ, ձևավորել ազատության ու ճշմարտության ներքին կողմնորոշումները:

Պարույր Սևակի ստեղծագործությունը գրված է, մասնավորապես, երիտասարդության համար. այստեղ է, որ նրանք մերձենում ու ճաշակում են կեղծիքից ու վերագրումներից հեռու, անկեղծ ու շիտակ, շշողոքորթող խոսքը, այստեղ է, որ նրանք համտեսում են ապահովապես ամենաազնիվ իդեալների ներգործության բերկրանքը, այստեղ է, որ ընթերցողը անվերապահորեն հավատում է իր բանաստեղծին և ապաստան գտնում նրա ուժեղ ու հզոր բանաստեղծական աշխարհի արդարամիտ երկնքի տակ:

Պարույր Սևակի ստեղծագործությունը շրջափոխեց մեր կոմիտով գրական զարգացումը, որոշակի ազդեցություն ունեցած անգամ հայ հասարակական մտքի վրա (սա պետք է հասկանալ նաև հասարակական-բարոյական ճշմարիտ սկզբանքների յուրացման հնարավորություններ ստեղծելու իմաստով), Բանաստեղծը ազնվացնում էր ժամանակակից մարդու խղեալը, ամեն ինչ աղատում կեղծիքից և երեսպաշտությունից, առաջ էր մղում ճշմարիտ (ոչ հորինված, ոչ վերագրվող) լարոյական արժեքների պաշտպանությունը, բանաստեղծական խոսքը հյուսում էր արդարամիտ խղճի և նույնքան արդարամիտ հավատի ձայներից։ Երկար ընդմիջումից հետո տուածին անգամ էր, որ մի բանաստեղծի հանդեպ արթնացավ ժողովրդական հավատն ու վստահությունը։ Ժողովուրդը նրա խոսքի մեջ տեսավ իր շահերին, երազանքներին ու իշղեալներին նվիրված իսկական ուխտավորի, որ անվախորեն քնարերգում և առաջ էր մղում հասարակությունը վերանորոգելու, կյանքը հիմն ի վեր վերափոխելու ժողովրդական համատին ու համոզմանը ներհյուսված մտքերն ու տրամադրությունները։ Ժողովուրդը նրա մեջ գտավ իր իսկական պաշտպանին։

Այս օրերին, դառնալով Պարույր Սևակի ստեղծագործությանը կարելի է զարմանալ, թե ժողովրդի բանաստեղծը 50-ական թվականներին՝ աղատախոհության նախաշեմին և 60-ականների վերելքի պայմաններում ինչպես է կարողացել իր քնարը ծառայեցնել ժողովրդի ներսում վաղուց բանտված զգացումների ու տրամադրությունների արտահայտմանը, ինչպես է գտել խոսք ու պատկեր, արտահայտչական մղանակ ու ձև բանաստեղծությունը ճշմարտությամբ հագեց-

նելու և մարդկանց համակելու ամեն ինչ վերափոխելու ու վերակառուցելու այսօր միայն հնարավոր դարձած բարոյական ու իրավական գաղափարներով։ Պարույր Սևակը այս տեսակետից մարդարե էր և է, որովհետև նրա ստեղծագործության ջիղը գոյանում է արդարամտությունից և խղճից, այն զորեղ հումանիստական գործոններից, որոնցով կանգուն են ամեն մի բարոյական հասարակություն և իրավական պետություն։

Ընթերցելով ու վերընթերցելով Պարույր Սևակին, կարելի է համոզվել, որ այն, ինչ այսօր փորձում են հաստատել մեր հասարակության մեջ բարոյական մաքրագործման, ինքնակատարելագործման ճանապարհով և անցյալը խղճից ու ճշմարտության կշռաքարով գնահատելու դիրքորոշմամբ, վաղուց ի վեր՝ 50—60-ականներից որպես հստակ գիտակցություն և ապրված զգացում ծավալվել է Պարույր Սևակի քերթվածքներում։ Համարձակորեն նվաճելով բանաստեղծության ամբողջ ներքին քնարական շերտերը և հոգևոր անկյունները, Պարույր Սևակի բանաստեղծությունը այս տեսակետից եղակի երևույթ է և էլ ավելի գեղեցիկ ու հրաշալի է երևում 50—60-ական թվականների հոգևոր ու մտավոր համատարած արթնացման ֆոնի վրա։

\* \* \*

Պարույր Սևակը արդեն մի քանի բանաստեղծական ժողովածուների հեղինակ էր, երբ մերկացվեց անհատի պաշտամունքը, և փոքրինչ հետ քաշվեց այն վարագույրը, որ ծածկում էր հենց նոր անցած նրեք տասնամյակների մղձավանջային պատմությունը։ Իբրև բանաստեղծ այդ ժամա-

Նուի նա բավական ճանաշում ուներ Մոսկվայի գրական շըրքանիներում և ուստի ընթերցողների մոտ։ Նրան սիրում էին և հայտառում։ Պարուցքն արդեն ուստերեն հրատարակվել էր։ Նու տմենից առաջ ոչ մեկին նման չէր, և երկրորդ՝ խիզախ էր ու անվեհեր։ Նա գիտեր, որ վաղ թե ուշ պիտի դեմ առնի պահպանողական դաժանությանն ու երեսպաշտությանը (իսկ զրա հետևանքը կործանումն էր), բայց ընդառաջ էր գնում հակատագրին առանց որևէ կասկածի կամ վեհերոտության։

Նա գրում էր ճշմարտությունը մեր կյանքի մասին։ Նըրան չէին տպագրում, իսկ երբ հարկադրում էին պատշաճ ձև անսք պահպանել, գրածը մի ուրիշ բան էր դառնում՝ դեն նետելու հնոտի։ Եվ նա դեն էր նետում բանաստեղծությունները։ Գերադասում էր շտպագրել, բան տպագրել կեղծիքը։

1948—58 թվականները նրան շատ բան սովորեցրեցին։ Նա կարողացավ հասնել անհնարինին՝ մշակել խոսք ու բանաստեղծական ձևեր, որոնց օգնությամբ հնարավոր էր ասել ճշմարտությունը։ Բանաստեղծության համար կարենոր ու գըլ-խավոր էր դառնում ենթաքնագիրը։ Անհատի պաշտամունքի ողաշտոնական մերկացումից հետո, արդեն համաժողովրդական գիտակցության մեջ փետրաթափված առաջնորդի պաշտամունքի վրա հասած համաժողովրդական հուսախաքության-հուսահատության մասին ահա թե ինչ է գրել Սևակը 1956 թվականին «Ի՞նչ մնաց» բանաստեղծության մեջ։

Աշքերը միշտ լույսի սովոր՝  
Ես հիմա տանջվում եմ խավարից։  
Երեկվա իմ վարդավառից  
Ի՞նչ մնաց — այս շապիկս թաց,

Կախվելու մի պարան մնաց  
իմ սիրո հարուստ ավարից:

Բանաստեղծական կառուցվածքը, պատկերահամակարգը  
ավանդական է, չկա որևէ շեղում, արտառոց բան: Բայց  
ապշեցուցիլ է ենթաքնազիրը՝ այն խորքը, ուր բացվում էր  
ստալինյան մղձավանջից աղատագրվող մեր մարդկանց հա-  
մակած տրամադրությունների՝ անզորության, հուսահատու-  
թյան, ինքնահոշոտման ճշգրիտ պատկերը: Իրոք, պարզվել  
էր, որ այն, ինչ տարիներ շարունակ երկինք էր բարձրացվել,  
ֆետիշացվել՝ եղել էր ոչ թե երկրպագության արժանի, այլ՝  
մարդկանց հոգեւոր ու մտավոր համատարած կործանումնե-  
րի, խեղումների, բարոյական ինքնալքումների պատճառը:  
Իրականում Ուզուրպատորը երկիրը սրի էր քաշել իր անունից  
և իր օգտին՝ ժողովրդին ներշնչելով, որ այդ արվում է  
հանուն ժողովրդի ապահովության ու բարիքի: Երբ հրապա-  
րակ հանվեցին անհատի պաշտամունքի ողբերգության խորքն  
ու լայնքը, աղնիվ մարդկանց, հավատացյալներին այլ բան  
չէր մնում, քան, ինչպես ասում է Սևակը, սեփական շապի-  
կից կախվելու պարան պատրաստելը.

Եվ որդեկորույս մորից առավել՝  
Վա՞յ տամ ու ողբամ այն թշվառ մարդուն,  
Որ հավա՞տ ուներ —և ծովածավա՞լ,  
Եվ հիմա շունի՞,  
Մի՞ կաթիլ շունի....

Բանաստեղծը հետստալինյան դարաշրջանի շեմին խոր-  
շըրդային գրականության մեջ առաջիններից մեկն էր, եթե  
18

ոյ ամենաառաջինը, որ այդպես կրքու ու ինքնամոռաց և տյսողիս անվախ, իր ընթերցողին մերձեցնում էր պատմական ճշմարտության ըմբռնմանը։ Նրա ստեղծագործությունը այդ իմաստով օգնում էր խորհրդացին Հասարակությանը հասնելու ինքնաճանաշման, հասկանալու, որ պետք է վերափոխվի ամեն ինչ, որ այն, ինչին հասել է երկիրը՝ մարդու սոցիալական բարեկեցության, քաղաքական, տնտեսական և գաղափարական ազատությունների ուղղությամբ իրականում ոչ թե նվաճում է, այլ... պարտություն, կորուստ, վայրեցք։

Ճշմարտությունը նրա պոեզիայում աստիճանաբար գեղագիտական գործոնի էր վերածվում, որովհետև այնպես էր հյութազրկվել և ուժազրկվել բանաստեղծությունը, այնպես էր բանաստեղծականն ու գեղեցիկը վարպետությամբ փոխարինվել փրուն ու վերամբարձ ճառասացությամբ, կուսակցության ու առաջնորդի գովքով, անհնարին ստով ու հետամտող կեղծիքով, այնպես էր բարոյազրկվել (սրտից ու հոգուց րխած ոչ մի թրթիռ չէր հաղորդվում կոշտ ու խըզխրիցացող նրա խժածայնին), որ այլևս հնարավոր չէր դիմանալ, այլևս հնարավոր չէր թոթափել այդ ամենը և շփակել որոտրնդուտ ու կոշական այդ բանաստեղծության ճանապարհը և շփնալ իսկությանն ու ճշմարտությանն ընդառաջ։ Ճիշտ է, սարսափը դեռ շարունակում էր հիմա էլ իշխելուս էության դեռ պահպանվել էին այն բոլոր պետական ու հասարակական ուժերը, հաստատություններն ու հիմնարկությունները, որոնք հնարավոր էին դարձրել պաշտամունքի շրջանի սոցիալիզմը, նրա գաղափարախոսությունը, իշղեալները, բայց, ինչպես այն ժամանակ էին ասում, սկսվել

Էր ձնհալը, օդի մեջ զգացվում էր վաղ գարնանային ցըրտություն, որ բուրում էր արթնացող հողաբույրով, ձյան ծածկոցի տակ մայրության բնաղդներով տեղաշարժվում էին արմատները, խոխոջում սառնորակ ու զուզալ ջրերը, հողը պատովում էր արևերես դուրս գալու ուժից:

Միայն հատուկենտ համարձակները լծվեցին հասարակությանը ինքնաճանաշման բերելու անհնարին վտանգներով հղի գործին: Դարաշրջանը ճանաշած այդ մարդիկ գնացին ինքնազոհողության, և ժամանակից առաջ, հաղթահարելով սարսափի օղակը, այնուամենայնիվ, փորձեցին հրաժարվել կեղծ ու պատիր գրականությունից, ծաղրուծանակից, հոգեոր անբարոյականությունից: Այդ նահատակների մասին է Սևակը գրել.

Ո՞ւշ-ո՞ւշ են գալիս, բայց ոչ ուշացած,  
Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին:  
Եվ ժամանակից առաջ են ընկնում,  
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Պետություններին «վախ ներշնչող» այդ «այլախոհներն» են, որ ճշմարտությունը գերադասում են ամեն ինչից, նրանք են, որ այլևս չեն կարող ապրել այնպես, ինչպես մնացածները, չեն կարող թագավորին մատնացույց շանել սեփական մերկությունը, չեն կարող այլևս «մնալ քարայրում» և պետք է, որ կատարեն ազատագրվելու առաջին քայլը, ու, եթե անհրաժեշտ լինի, զոհվեն հենց դրա համար:

Հիշարժան 1956 թվականը հնարավորություն տվեց եթե ոչ բացահայտ, գոնե ներքին տրամախոսությամբ, որ գաղտնախոսության պես մի բան էր, մերձենալ ճշմարտությանը:

Անհնար է բոբիկ քայլել,  
 Այս կոշիկն էլ շատ է նեղում,  
 Ինչպե՞ս քայլել առանց ուղու,  
 Այս ճամփան էլ շատ է շեղում,  
 Դոփիել տեղո՞ւմ: Բայց դրանից  
 Ո՞չ կոշիկդ կլայնանա,  
 Ո՞չ էլ ցավը կմեղմանա...  
 Ցա՞վն է հաճախ առաջ մղում:

Հետագայում Պարույր Սևակն ընթերցողներին ասում էր, որ բանաստեղծների գործը չէ ցույց տալ, թե նրանք ինչ ոլիտի անեն, այլ այն՝ թե ինչ չպիտի անեն: Այսպես, բանաստեղծը հասկացնում էր, և այն էլ շատ որոշակի, որ չի կարելի քայլել առանց ուղու և հանձնարարում էր ցավից տղատվելու համար առաջ մղվել, այսինքն հաղթահարել հաստատված սահմանագիծը, փնտրել նոր ճանապարհ ու ելք, հանգրվանի նոր ափեր, մտածել հասարակական առաջխաղացման մասին և ամեն դեպքում որոնել ու գտնել ձիշտը, հարմարը և ուղիղը: Պարույր Սևակը հանդես էր գալիս այն հասարակական ուժերի դիրքերից, որոնք «ժամանակից առաջ էին ընկել», որոնց համար հասարակության վերափոխումները ոչ միայն օդի պես անհրաժեշտ էին, այլև ծանր մղձավանջից դուրս գալու միջոց, փրկվելու, մարդուն իր կոշումը, իրավունքները, իդեալները վերադարձնելու պայման: Իրոք, տեղում դոփիելուց և սեղմող կոշիկից պետք էր տղատվել...

Հասարակության վերափոխմանը հետամուտ բանաստեղծը փորձում էր վերականգնել շատ ու շատ նորմեր՝ բա-

րոյական, հասարակական, գեղագիտական և գտնել դրանց գործադրման հնարավորությունը կամ մարդկանց վերադառնելու միջոցը։ Նա հենց այն խիզախներից էր, որ առաջինը խոսեց ճշմարտության, խսկական ճշմարտության անհրաժեշտության ու անխուսափելիության մասին որպես մարդուն և հասարակությանը վերափոխող հեղափոխական ուժի։

Պարույր Մևակը ճիշտ գտավ բանալին։ Առանց մաքրելու ավգյան ախոռները, առանց հասարակությունն ազատելու պարտադրվող կեղծիքից ու ստից (որովհետև այդ վարագույրի ներքո էր հնարավոր դարձել ու իրականացվել պաշտամունքի շրջանի ամբողջ մղձավանջը), առանց մարդկայնացնելու հարաբերությունները, առանց հումանիզմ ներարկելու զորանոցային սոցիալիզմի արյունազուրկ անոթները, առանց դեմոկրատացնելու երկիրը, հնարավոր շէ գրականությունն ազատել այն գերությունից, ուր գտնվում էր տասնամյակներ շարունակ։

Մեծ բանաստեղծը հասկանում էր, որ առանց ճշմարտության չի կարող լինել գրականություն, ճիշտ այնպես, ինչպես առանց ճշմարտության չի կարող լինել գեղեցկություն։ Գրականությունը ճշմարտությունն էր, ճշմարտությունը՝ գեղեցկությունը։ այս հայացքը՝ էսթետիկական նորաբանությամբ հանդերձ, 50-ական թվականների վերջերին կանխորոշում էր անցման շրջանի (անհատի պաշտամունքի հաղթահարման շրջանի) բոլոր գեղարվեստական ձեռքբերումների ժողովրդայնությունն ու հումանիզմը։ «Խսկական բանաստեղծությունը, — գրել է Պարույրն այդ տարիներին, — պիտի դառնա միայն ճիշտն ու ճշմարիտը, առողջն ու ար-

գարը: Ուստի և պիտի հիշել՝ գեղեցիկը միշտ չէ, որ առողջ է, իսկ առողջը միշտ գեղեցիկ է»<sup>1:</sup>

Պաշտամունքի տարիների մղձավանջից դուրս եկող զրական սերնդի համար առանձնապես թանկ էր ճշմարտության գինը: Ամենից շատ մարդկանց պակասում էր ճշմարտության օգնությունը. նրանք ապրել էին մի շրջանում, երբ, ինչպես խոստովանել է Սևակը՝ «սեփական կարծիք ունենալը հավասարվել էր հերետիկոսության»<sup>2:</sup> Դա փակ ու խուփ շուրթերի, հնագանդ ու մունջ ենթարկվածության անխոս տառապանքի շրջան էր. մարդկային ազատ միտքը, խոսքը, ժպիտը վերահսկվում էր ամեն կողմից և ամենքից: Մեկ ճշմարտություն կար միայն, և այդ մեկ հատիկ ճշմարտությամբ լցված էին մեր կյանքը, մտածողությունը, գործերը: Հավատաքննական պատժարաններում ամեն օր ու ժամ ստուգվում էին մարդկանց հավատարմությունն այդ ճշմարտությանը:

Հիմա հետեւում մնացած ծանր, խենթանալու աստիճան ծանր իրականությունից դուրս էին գալիս մարդիկ՝ իրենք անգամ շհավատալով ներկային: Սարսափից լլկված նրանց մարդկային էությունը և գիտակցությունը նախ վախվորած տագնապում էր և զգուշանում, հետո՝ աստիճանաբար (բայց երբեք զգուշությունը չլքելով) սկսում էր կապվել ճշմարտությանը: Ճշմարտություն՝ նշանակում էր ամենից առաջ վերջ մղձավանջին, ազատագրում, ինքնավահություն,

1 Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, Երևան, 1974, հատ. 5, էջ 265:

2 «Սովետական գրականություն», 1988, № 1, էջ 133:

մարդկային իրավունքի ճանաշման բերկրանք, բարոյական և  
ամեն տեսակ արժեքների գնահատություն:

Հանդիսավոր խոսք եմ տալիս  
Քեզ ուղագե՞լ  
Ու կացինե՞լ  
Տմարդությո՛ւն,  
Իսկ քեզանով, ճշմարտությո՛ւն,  
Իսկ քեզանով սի՞րտ վարակել,  
Անձրև ու ջուր թե բարակեն՝  
Եվ իմ արյա՛մբ քեզ ոռոգել—  
Վերստեղծել ու նորոգել...

Ճշմարտության վերստեղծման ու նորոգման այս ճիշը  
բանաստեղծի կրծքից դուրս էր թոշում երդման պես և հեն-  
ված էր ամուր այն հավատքի ու գիտակցության վրա, թե  
նոր ժամանակները, հասարակության վերանորոգության  
ժամանակները (որ սկսվել էին 1956-ից՝ 20-րդ համագու-  
մարով) պատմության աղբանոցը կնետեն անարդարության  
ու կամայականությունների վրա կառուցված «ճշմարտու-  
թյունը» և հնարավորություն կտան իսկապես գնահատել  
այն, ինչ եղել է, կա և հնարավոր է, որ կլինի:

Բանաստեղծը,—ասում էր Պարույրը,—աշխարհ է գա-  
լիս աշխարհը գնահատելու համար. «Իսկ գնահատության մի  
շափ ու կշիռ կա՝ ճշմարտությունը, որ չի կարող լինել հա-  
վերժական, և, փառք աստծո, հավերժական չէ, թե չէ կյան-  
քը վաղուց մեռած կլիներ։ Ճշմարտությունը չի եղել ու չի

կարող լինել ոչ պաշտոնական, ոչ կանխորոշյալ, ոչ քարայրածություն՝<sup>1</sup>:

Բանաստեղծը, անշուշտ, ճշմարտություն հասկացությունը գործածությունը գործածում և ըմբռնում էր որպես սեփական վերաբերմունքի արտահայտություն կյանքի նկատմամբ, որպես մի շափանիշ, որով կարելի էր գնահատել առաքինին, արդարը, տղնիվը, գեղեցիկը կյանքում ու գրքերի մեջ:

Ճշմարտությունը նրա ըմբռնումներում նույնանում էր ձիշտ ապրած մի կյանքի հետ, այսինքն՝ կյանքի փորձից դուրս բերված այն եզրակացության հետ, որով ուժեղ է զգում իրեն մարդ-անհատը և հասարակությունը:

Ճշմարտության հունը փորելով, նրա համար զոհվելու պատրաստակամությամբ նայելով կյանքին ու աշխարհին, բանաստեղծը հավատացած էր, որ միայն այդպես ու այդ հանապարհով կարելի է հեղափոխական վերակառուցումների զնալ, կարելի է, իրոք, հաղթահարել կեղծիքի ու երեսպաշտության տասնամյա սովորույթները, կարելի է մարդավարի և առանց ջղածգումների երես առ երես նստել կորուստների հետ և բարոյական արդարացում գտնել՝ ամաշկուտ արիությամբ խոստովանելով խաչվածների ու տառապյալների անմեղությունը:

Նա գիտեր, որ ճշմարտությունը չի կարող լինել հավիտենական, և ոչ էլ պաշտոնական՝ հրահանգված պետությամբ և նրա օրենքներով։ Ճշմարտությունը գոյանում է կյանքի փորձից՝ և այն էլ մեծ, երկարատև, կյանք արժեցող փորձերից, և հենց այս ճշմարտությունն է, որ տասնամյակներ

<sup>1</sup> Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, Երևան, 1974, հատ. 5, էջ 390:

շարունակ չէին տեսնում, հաշվի չէին առնում կամ բանի տեղ դնում:

1960-ական թվականների սկզբներին գրած «Խաղաղ-իք սարքողը» բանաստեղծության մեջ Պարույրն ասում էր, որ աշխարհում «ոչ ոք չի կարող լոկ մի բան սարքել»...

Այն միայն,  
Ինչին ճշմարտություն են կոչել աշխարհում,  
Լոկ ա'յդ չի սարքվում,  
Թեպետ և անվե՛րջ, դարե՛ր շարունակ  
Զանում են սարքել  
Անունով աստծո՛ւ,  
Տիրակալների հրամաններո՛վ...  
...Զենքո՛վ,  
Որ մարդկանց կրծքերի վրա  
Ուսուցանում է կետադրություն:  
Սարքում են այսպես  
Դարեր շարունակ:

Դիմակավորված և իմաստուն խաղալիք սարքողը ճանաշում էր մի աղջկա, որ ասում էր. «Երբ Բեթհովեն եմ լսում, թվում է, թե ես քայլում եմ ծովի վրայով». մաքրության, եթերային քնքշության, անձեռնմխելի առաքինության տեր այս արարածի տաք կաղապարով ձուլված խաղալիք-աղջիկն է, որ հայտնում է ճշմարտության գինը: Ճշմարտության գինը, պարզվում է, թանկ է, շա՞տ թանկ. արժե՞ արդյոք այդ գնով ձեռք բերել ճշմարտությունը: «Դատա՞րկ բան..., Ընդամենն արժի մի... անցած մի կյա՞նք»... Ըստ երեսութին ուրիշ տեսակ ճշմարտություն էլ չի լինում. սար-

բովի ճշմարտությունները, որ դարեր շարունակ պարտադրում են աստծո անունով, տիրակալների հրամաններով, զենքով, այսինքն միմիայն բռնությամբ, հանդիպադրված են իրական ճշմարտությանը, որ անպաշտպան է, անթաքույց, արևերես, բայց որը ուժեղ է, անկործանելի և ավելի զորեղ, քան զենքն ու բռնությունը, ճշմարտության ուժին ի վերջո այս աշխարհում ոչինչ և ոչ մի բան չի դիմացել: Ճշմարտությունը հաղթում է՝ Բանաստեղծը գտել է դրա բացատրությունը, ճշմարտությունը մեծ, շատ մեծ բան է. ճշմարտությունը կյանք է՝ ապրած օրերի ու տարիների, տասնամյակների, հազարամյակների իմաստասիրական քամուկը, առանց որի տեղաշարժ չկա, առաջ գնալ չկա: Սարքովի ճշշարտությունները ժամանակավոր են և դիմանում են այնքան, որքան դիմանում է բռնատիրությունը: Բռնատիրության անկման հետ ընկնում են և դրանք՝ այդ սարքովի ճշմարտությունները:

«Մենք վերականգնում ենք ճշմարտության իրավունքները, այն մաքրելով շինծու և նենգափոխված ճշմարտություններից», — ասված է «Վերակառուցման սկզբունքներում»: Եվ իրոք, մինչև 20-րդ համագումարը մեր երկրում իշխում էին սարքովի ճշմարտությունները, և մեր մտածող մարդիկ ևնթակա էին բռնությամբ պարտադրված ճշմարտությունների գերությանը, շինծու և նենգափոխված ճշմարտությունների ստրկությանը: Քանի՞ տասնամյակ տևեց այդ գերությունը. խրուշչովյան փոքրիկ միջարարից հետո ևս երկու տասնամյակ: «Շինծու և նենգափոխված ճշմարտությունները» շարունակեցին հասարակության ապակողմնորոշման գործը,

մինչև որ վրա հասավ արդի վերակառուցման իսկապես հեղափոխական ժամանակաշրջանը:

\* \* \*

Իր «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրականում Պարույր Սևակը անում է մի այսպիսի խոստովանովթյուն. «Բախտավորությունը հազար ու մի ձեերով է դրսեորվում: Բայց դրանց մեջ լավագույնը, ըստ իս, ճիշտ սերվելն է: Մարդիկ շատ գոհ են իրենց խելքից և դժգոհ իրենց բախտից: Ես գոհ եմ իմ բախտից: Ես, ինչպես երևում է ճիշտ էի սերվել»<sup>1</sup>: Իսկ ինչ էր հասկանում Պարույրը ճիշտ սերվելու ժառանգորդական ինքնաճանաշում ասելով. «Սկսած 1942-ից, — բացատրում է նա, — իմ գիտակցական կյանքի սեմից, ես կյանքին ու աշխարհին նայում էի այնպես, ինչը հետագայում (20-րդ համազումարի որոշումներով) դարձավ ընդհանուր կանոն մեր կյանքի ու երկրի համար»<sup>2</sup>:

20-րդ համագումարում (1956) վերականգնվեցին կյանքի լենինյան նորմերը, ճշմարտությունն ասվեց ստալինյան ժամանակների և այն անմեղ գոհերի մասին, որոնք լցվել էին բանտերն ու աքսորավայրերը, նաև նրանց մասին, ովքեր դեռ շարունակում էին հեծել այդ պատժարաններում:

Դեռևս 1942-ին, վաստակաշատ Ռուբեն Զարյանի ինամարկությամբ, տպագրելով իր առաջին բանաստեղծությունները, 17-ամյա Պարույրը երկու բան որոշակի էր դարձնում. մեկ՝ որ իր «երգի շեփորը» չի ունենալու «կեղծիքի

<sup>1</sup> «Սովետական գրականություն», 1988, № 1, էջ 133:

<sup>2</sup> Նույն տեղում:

շպար կամ օքսիդ» և երկրորդ՝ «Հայրենիքը արդարավաստակ» պիտի միշտ առաջնորդվի մեծ լենինի գծած ուղիով.

**Որ ցուցամատը մեծ առաջնորդի  
Նորից ու նորից մնա ուղենիշ...**

Այն տարիների համար Պարույր Սևակի առաջին բանաստեղծությունները կարող էին դիտվել որպես մեղսագործություն, ընդդիմամարտ տրամադրությունների դրսևորում, որպես գաղափարական, ինչպես այն ժամանակ էին ասում. անհավատարմության կամ սայթաքման նշան։ Բայց բանաստեղծը «իր մանուկ հոգով ու անվարժ գրշով» երդում էր տալիս.

Պիտի իմ երգը ծնվի կյանքի մեջ,  
Կյանքի գրկի մեջ... կյանքից գոյացած,  
Պիտի որ դառնամ կյանքի բանաստեղծ,  
Կյանքի զորությամբ բարձր խոյացած։

Այս մեջբերումները կատարված են 1941 թվականին-դրած բանաստեղծություններից։ Սևակը վկայում է, որ իր բանաստեղծությունների տպագրությունը «Սովետական գրականություն» ամսագրում «Հանդինություն համարվեց», Կյանքը շուշացավ այդ ապացուցելու, — ասում է նա. «Խմբագիրը (Ռուբեն Զարյանը. — Կ. Դ.) հեռացվեց, իսկ ինձ դարձրին մի «քայլող կախարան, որ զրնգացնում էր իր վրայից տրված բազմաթիվ «իզմ»-երի զանգուլակները»<sup>1</sup>։

Հենց սկզբից զինվորագրվելով ճշմարտությանն ու արդարությանը, դեն նետելով «կեղծիքի շպարն ու օքսիդը»,

<sup>1</sup> «Սովետական գրականություն», 1988, № 1, էջ 132։

17-ամյա բանաստեղծը իր ժառանգական սերվածությունն էր ի հայտ բերում, անջրպետելով իրեն այն վիթխարի ու ամոթալի գրականությունից, ուր սուտը ճշմարտություն էր դարձել և, հետևաբար, ամեն ինչ զլխիվայր շրջվել: Չի կարելի սոսկումով չկարդալ այդ շրջանի բանաստեղծական ժողովածուները, որոնցում չկար որևէ ազնիվ ու բացախոս զրոյց, զգացում, տրամադրություն, ուր ամեն ինչ մաթեմատիկական ճշգրտությամբ համաձայնեցված էր «ժամանակների ոգուն», ուր նվազագույն իսկ ինքնուրույնությունը (միտքը, հույզը) կարող էր դիտվել որպես հակասովետիզմ: Մարդիկ գրում էին ու տպագրում կործանվելու վախից ահաբեկ ու սարսափահար: Նրանց մեջ եղած հատ ու կենտ համարձակները անհապաղ կառափնարան էին ուղարկվում կամ զարդարվում «իզմ»-երի զանգովակներով, որ նշանակում էր, թե ընկնում էին «սև ցուցակները»: Այսպես, ինքնուրույն ձայնով ու մտածողությամբ Պարույրն այլևս չտպագրվեց մինչև 1948 թվականը, մինչև որ քավարանի մի երկար շըրջան անցնելուց հետո, նրան թույլատրվեց հրատարակել իր առաջին բանաստեղծական ժողովածուն: Զտված, գրաքննիշի զգոն հայացքից անցած, գրեթե բոլոր իսկական ներշընչանքներից թափուր այդ ժողովածուն անգամ, ահա թե ինչպես է գնահատել ժամանակի քննադատը. «Դրական և ուրախալի փաստ է, որ Սևակը դուրս է եկել մեր ժամանակի առաջատար թեմայի՝ կոմունիզմի թեմայի հետազոտությանը: Բայց երբեմն նա սխալ դիրքերից է այն լուծում: Նրա նկարագրած շատ պատկերներ ակամայից մեզ հետ են տանում. մինչդեռ կոմունիզմը օր-օրի ծնվում է մեր ժողովրդի ռեալ պայքարում, մեր մարդկանց աշխատանքային

գործունեության մեջ։ Կոմունիզմը մեր այսօրվա պայքարի խսկական բովանդակությունն է, որ իրականանում է ստալինյան հանճարեղ ծրագրով։ Ամեն օր մեր մարդիկ իրենց աշխատանքով մոտենում են կոմունիզմին, այս է, որ դեռևս չի գիտակցել բանաստեղծը»<sup>1</sup>։ Հետաքրքիրը վերջին ֆրազն է. «Այսօր մեր մարդիկ իրենց աշխատանքով մոտենում են կոմունիզմին, այս է, որ դեռևս չի գիտակցել բանաստեղծը»։ Թեև 37-ի փորձությունը ճաշակած քննադատի երիտասարդական անզգուշությունը կարող էր Սևակին կյանք արժենալ կամ ուղղակի աքսոր, այնուամենայնիվ, սրատես է եղել նրա աշքը։ Պարույրն իրոք, գիտեր, որ մեր ժողովուրդը ոչ միայն չի մոտեցել «կոմունիզմին», այլև շատ հստակ էր պատկերացնում դրա անհնարինությունը։ Հետագայում, մեկ տասնամյակ անց, նա ավելի որոշակի գրեց.

### Խոստանում եմ

Չբարձրանալ ու չքայլել ձիգ տարիներ  
Իմ ոտքերի  
Խեղճ թաթերին։  
Ինչի՞ համար,  
Այն, որ չկա՝  
Չի երևա...»

Սերելով խսկապես ճիշտ ապրողների ու ճշմարտության նվիրյալների բանակից, Պարույրը կարողացավ «դիմանալ», ինչպես ինքն է ասում. բայց ի՞նչ գնով. «Իմ կյանքի լավագույն տասնամյակը անցավ ինքնամաքառման մեջ»։ «Իմ

1 «Սովետական գրականություն և արվեստ», 1949, № 3 :

տասը տարվա աշխատանքը մնաց ու մնում է գզրոցում։ Իր ժամանակին՝ չեղ կարելի, իսկ հիմա շարժի։ Սևակը աշխատում էր չհաճոյանալ ոչ ոքի։ Այդ տասնամյակը վատագույնը եղավ նրա համար։ «Ես հասկացա, — գրել է նա, — որ մի բան մտածել ու այլ բան ասելը անբարոյականության վատթարագույն տեսակն է»<sup>1</sup>։ Ճանաչված ու պաշտոնական գրականությունն ու գրողները չեին կարող այլ գործընթաց էլ ունենալ. նրանք մտածում էին մի բան, բայց գրում ու արտահայտում մի այլ բան։ Այսպես էր ամբողջ երկրում։ Ճեղքել պատնեշը հնարավոր չէր. գրել իրեն հակառակ՝ նույնպես։ Գտնել մի միջին գիծ՝ երկի հենց դա էր որոնում Սևակը, երբ 50-ական թվականների սկզբներին ձեռնարկեց «Անհաշտ մտերմություն» չափածո վիպակը։ Պարույրի ձեռագրերում պահպանվել են այդ վրիպված երկի բազմաթիվ տարբերակներ։ Չորս անգամ վերամշակելուց հետո անգամ՝ վիպակի շարվածքը ցրեցին, և այդ բազմաշարշար ու տխուր պոեմը առաջին անգամ հրատարակվեց ուստերեն, Մոսկվայում, «Друзья из Советашена» վերնագրով, 1953-ին։ Սևակը կարևոր մի խոստովանություն է անում. «Այդ պոեմի վրա տառապելու տարիներին ես հասկացա, որ մենք զբաղված ենք անհնարինը հնարավոր դարձնելու տանջալից ինքնախաբեռությամբ»<sup>2</sup>։

Սա մի ձևակերպում է, որ ապահովաբար վերաբերում է մեր երկրում ստեղծագործող բոլոր իսկական արվեստագետներին, գրողներին, գիտնականներին և նրանց ապրած

<sup>1</sup> «Սովետական գրականություն», 1988, № 1, էջ 133։

<sup>2</sup> Նույն տեղում։

մարդկային տառապանքին։ Ամեն ինչ խոր ճգնաժամ էր ապրում։ Ժամանակակից մարդուն հասկանալի<sup>o</sup> է արդյոք այդ շրջանի մեր մարդկանց դրության ամբողջ ողբերգականությունը։

«Սեփական կարծիք ունենալը հավասարվել է հերետիկոսության»,—ասում է Պարույրը, Եվ այս պայմաններում ստեղծագործական իսկական ներշնչանքները, իհարկե, կարող էին պահպել միայն գզրոցներում, ծածուկ, հետաքրքիր հայացքներից հեռու։ «Անհնարինը հնարավոր դարձնելու ինքնախաբեռությունը» իսկական տաղանդին կարող էր հասցնել կործանման։ Զէ<sup>o</sup> որ դա կոմպրոմիս էր, ինչ-որ բան զիջել էր նշանակում և վերջին հաշվով՝ հրաժարումն սեփական հեղափոխական սկզբունքներից։ Սևակի կյանքում (որովհետև նա ուրիշ զարմից էր) այդ տառապանք-զբաղմունքը տևել է մի կարճ միջոց։ Դիմանալով բոլոր զրկանքներին (հոգեւոր և նյութական), նա, այնուամենայնիվ, շդավաճանեց իրեն։ «Իմ շատ գրչակիցների համեմատությամբ, ես կարողացա խուսափել շատ մեղքերից»<sup>1</sup>։

Խուսափելով շատ մեղքերից, նա շատ էլ կորուստներ ունեցավ։ Պարտադիր—բնական ստեղծագործական աճը արհեստականորեն դանդաղեցվեց, միանգամից ընդհատումներ ունեցավ, որ տասնհինգ տարի արժեցավ։

«Նորից քեզ հետ» (1957) ժողովածուն կարողացավ հրատարակել արդեն բավական տարիք առած հասակում։ Վերգտնելով իր փախստական էությունը, որ նրանից հեռացել էր «Ճայնը փոխելու» և «անհնարինը հնարավոր դարձնելու»

<sup>1</sup> «Սովորական գրականություն», 1988, № 1, էջ 133։

տարիներին, Սևակը միանգամից չէ, որ կարողացավ ամեն ինչ շտկել ու հետ բերել։ Ժողովածուն անցավ գրաքննության գրեթե նույն մանրախույզ բանագննության դժոխքով, որով անցնում էր նրա յուրաքանչյուր տողը։

Այդ տեսակետից ոչինչ չէր փոխվել, բայց տասնամյակի փորձը նրան հանել էր ստեղծագործական նոր ճանապարհ Նա երդվել էր այլևս երբեք չգրել մի բան և մտածել մի այլ բան։ Ժողովածուն հրատարակելուց առաջ բանաստեղծը իր «իսկական էության» հետ հանդիպել և վերջնականապես հաշտվել էր՝ դնելով մի վճռական պայման. «Գրել այնպես, կարծես աշխարհում ոչ Գուտենբերգ է եղել, ոչ էլ ընթերցող կա»<sup>1</sup>։

Բայց այդ պայմանը իրագործել կարելի էր միայն արտահայտչության այնպիսի ձևեր գտնելով, որ հնարավոր դարձներ միևնույն բնագրի երկակի ընթերցումը. ընդ որում՝ այդ ընթերցումը պիտի թելադրվեր բանաստեղծության ներքին ամբողջ կառույցով, ենթաբնագրային թելերով ու հասկացություններով։ Այս շրջանից սկսած Սևակը հասնում է նոր սկզբունքի՝ գրել այնպես, ինչպես մտածում ես ստեղծագործական կիրառմանը։ Ճիշտ է, սկզբում այնքան էլ դեռ վարժված չէր բանաստեղծը, բայց կարողացավ գտնել ճշշմարտությունը բանաստեղծաբար վերարտադրելու նոր ձևեղագիտությունը։

Աստիճանաբար նրա բանաստեղծությունը թևակոխում էր նոր շրջան։ Որոնեց ու հայտնաբերեց արտահայտչության գրեթե բոլոր այն ձևերը, որոնք ի հայտ էին բերում ճշմար-

<sup>1</sup> «Սովետական գրականություն», 1988, № 1, էջ 134։

սությունը բանաստեղծությամբ ընթերցողին հուշելու-թելապրելու հնարավորությունը. «Արդի բանաստեղծությունը, — 1965-ին արդեն գրում էր Սևակը, — շի կարող լինել հեքիախանազլական, որ նույնն է, թե պատմողական-նկարագրական: Նա պիտի լինի թելադրական-հուշարարական»<sup>1</sup>:

Խրուշչովյան դեմոկրատիայի և երկրի լիբերալացման տասնամյակը զուգադիպեց Պարույր Սևակի ստեղծագործական հասունացմանը: Նա գրեց «Անլուկի զանգակատուն» (1959) և «Մարդը ափի մեջ» (1963) գրքերը և միանգամից կանգնեց ժամանակակից գրական շարժման գլուխ:

1961 թվականին «Սովետական գրականություն» ամսագրում հրապարակելով «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմը, Սևակը շեր կասկածում, թե ճշմարտությունը մեր երկրի ու ստալինյան ժամանակների մասին, որ պատմվում էր պոեմի էջերում, կհասնի ընթերցողին, և հասարակության վերափոխման հեղափոխական անհրաժեշտության գիտակցությունը կհամակի մարդկանց:

Պոեմը նվիրված էր հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցին, որ ծնվել էր 1600 տարի առաջ և կարողացել երկրի, իրոք, ճգնաժամային մի պահի ապացուցել՝

Թե այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,  
Երբ վերջանում է ամե՞ն մի հնար...

Այս բանաստեղծական տողերը իրենց վրա էին առնում պոեմի գաղափարական ու էսթետիկական ներշնչումների ամբողջ ծանրությունը: Օգտագործելով Հայաստանի պատ-

<sup>1</sup> Պ. Սևակ, Երկերի ժողովածու, Երևան, 1974, հատ. 5, էջ 260:

մական անցյալի փաստերը, բանաստեղծը նախաքրիստոնեական, դիցաառասպելական շրջանի խորհրդանիշ-կերպարների օգնությամբ գծում էր Մաշտոցին նախորդածհայոց երկրի ու Հայության բախտի ճանապարհը.

ՄԵՆՔ բռնությունից խույս էինք տալիս՝  
Բեղուն դաշտերին գերադասելով լեռները քարոտ.  
Իսկ մեզ ոտնկոխ Հետապնդողին դիտապաստ  
անում  
Եվ դրանով իսկ անուն ստանում՝  
Կոչելով մեզ Հայկ:

Թվում էր, թե բանաստեղծը պատմական պոեմ է գըրում (և, իրոք էլ, դա այդպես էր), բայց օգտագործելով Մաշտոցի կերպարը և այն իրադրությունը, որի մեջ Հայտնըված կուսավորիչը ձեռնարկում է ազգի մտավոր սննդի Հայթայթման և հոգևոր միավորման մեծ գործը, կարողանում է արտաքուստ բոլորովին շնկատվող ներքին զուգահեռներ նետել անցյալ ժամանակների և ներկայի միջև և նույն հուշարարական-թելադրական բարբառով հասնել ներկա ժամանակների այնպիսի խոր ու ճշգրիտ բնութագրության ու գնահատումների, որոնք պարզապես ապշեցնում են Համեմատությունների մասշտաբայնության և Հայտնաբերումների արտաքո կարգի գեղեցկություններով։

Ահա այսպիսի մի օրինակ. կործանվող Հեթանոսության փլատակների վրա քրիստոնեությունը նոր օրենք ու կարգ է Հաստատում։ Հրի ճարակ են դառնում ու կործանվում մեհյաններն ու բագինները.

Ատրուշանների խորձ-խորձ բոցերի առատության  
տեղ

Կենտ-կենտ հասկերի չար աղքատությամբ  
Պաղ-պաղ մոմերն են ուզում դառնալ հաց  
մի նոր հավատի,

Որ իրեն կոչում կամավորություն,  
Բայց տարածվում է բռնությամբ անքող...  
Առանց հավատի կյանքում դյուրին չէ նույնիսկ  
մեռնելը,

Իսկ ապրելն... արդեն անկարելի է:

Մարդուց խլեցին իր հավատը հին,  
Իսկ հավատը նոր հաստատվեց խոսքո՞վ,  
Միմիայն խոսքով.  
— Դեռ նորը չկա՞ր:

Ավերվեց հինը և փլատակվեց,  
Իսկ նորը միայն կառուցվեց խոսքո՞վ,  
Միմիայն խոսքով.  
— Դեռ նորը չկա՞ր:

Ու այսպես՝  
Հանկարծ ու դանդաղորեն  
Ամեն ինչ շրջվեց,  
Տակնիվեր եղավ  
Եվ կարգի բերել չէ՞ր կարող ոչ ոք.  
— Ինքը շրջողն իսկ չէ՞ր կարող էլ, չէ?

Զարմանալի է այն գուգահեռը, որ ծնվում է ուսմունքը տարածող Եբրայեցու (Քրիստոսի) և նոր ժամանակների ուժմունքի կեղծարար Բոնակալի միջև.

Իսկ Եբրայեցին ասաց. «Մարդ եմ ես»,  
Եվ... դարձավ աստված»  
«Մարդ» եմ ասելով...

Նույնը չէր արդյոք կատարվում 20—40-ական թվականներին մեզ մոտ՝ մեր անծայրածիր երկրում՝ Ստալինի անվան ու անձի շուրջը: Նրա անոնքը, իրոք, հավասարվեց աստծուն, և ժողովրդական մասսաները ենթակա էին այդ ֆանատիկ հավատին այնպես, ինչպես աստծուն ու Քրիստոսին հավատացողները:

Եվ ի՞նչ էր մնում:  
Այլ բան չէր մնում,  
Քան թե աղոթել:  
  
Աղոթել նրան՝  
Այն նոր աստծուն,  
Որ խոստումներից աշք իսկ չէր բացում,  
Բայց ողջը՝ այնտեղ,  
Բայց ողջը՝ հետո՝,  
Եվ ոչի՞նչ՝ հիմա,  
Եվ ոչինչ՝ ցածում:  
  
Այլ բան չէր մնում,  
Քան թե աղոթել...

Սևակը կարողանում էր գեղարվեստական պատկերների մեջ դնել երկրի համար ստեղծված իրադրության և պատմա-

Հասարակական մթնոլորտի իսկության ամբողջ զարհուրանը, որ զուգահեռվում էր մոտիկ անցյալի ճշմարտությանը:

Ոչ ոք չգիտեր՝ վաղն ի՞նչ կբերի:  
Եվ ապագայի երաշխիք չկա՞ր:  
Բերք չէին տալիս արտերը բերրի:  
Նույնիսկ իսոստացյալ երկինքը վերին  
Դարձել էր մի կեղծանկենդան նկար:  
  
Անդնդանում էր մի անհայտություն,  
Անորոշություն մի արյունաքամ,  
Որ վատ է անգամ որոշյալ մահի՛ց:  
Մի անհայտություն, որ ինքն էր դարձել  
Երկրի իսկական տիրակալը չար:  
Եվ կործանումի սուր հոտ էր փշում,  
Ո՛չ միայն հացից, ջրից ու հողից,  
Այլ նաև օդի՛ց ու քամո՞ւց անգամ:  
  
Պետք էր, շա՞տ պետք էր ինչ-որ բան անել,  
Սակայն ի՞նչ անել և ինչպե՞ս, ինչպե՞ս:  
  
Ու բոլորն էին այդ հարցը տալիս,  
Իսկ պատասխանող չկա՞ր ու չկա՞ր...

Չի կարելի չտեսնել ու չզգալ, թե Պարույր Սևակը ինչպես է տառապել այս ամենը գրելիս. դրանք այն զգացողություններն ու ճշմարտության անդրադարձի բանաստեղծական ձևակերպումներն են, որոնք համակել էին նրան տասնամյակներ շարունակ:

Անորոշությունն ու անհայտությունը տանջում էին բանաստեղծին պաշտամունքը մերկացնելուց հետո էլ: Ճիշտ է, այստեղ խառնված էին մոտիկ անցյալի տրամադրություններ ու քաղաքական կացությամբ թելադրված ըմբռնումներ («Եվ ապագայի երաշխիք չկար»), բայց ընդհանուր համայնապատկերում գերիշխողը ներկան էր, սրանից ծնունդ առնող-երկարող մտահոգությունը ժահրահոտ կործանումի կանխազգացման և ինչ-որ բան անելու անհրաժեշտության հեղափոխական պահանջի սերտաճումը մի կարևոր և ամենքին հասկանալի դիրքորոշման, որ բացառում էր այլևս այդպես ապրելու, գոյատելու և դիմանալու հնարավորությունը: «Յոթ ինստիտուտ և համալսարան չեն կարող տալ այն,— գրել էր Սևակը, — ինչ տալիս է ուսուցիչներից մեծագույնը՝ տառապանքը»<sup>1:</sup>

Պարույր Սևակի ստեղծագործության մեջ տառապանքը գլխավոր գործող անձ է: Նա մի տող չի գրել, որտեղ հավաքված լինեին տառապանքին մերձ կամ այն արտահայտող զգացմունքները, քանի որ նա շնչահեղձվել է իրականությունից, կեղծիքի ու ստի թագավորությունից, քանզի այն պաշտպանվում էր և աշխարհի ամենաառաջադիմական գաղափարախոսության քղամիդն ուներ հագին:

Ժամանակակից ընթերցողը կկարողանա արդյո՞ք հասկանալ այն ժամանակվա մեր մարդկանց «գոյության ամբողջ սարսափը, ամբողջ ողբերգականությունը» (Ա. Ի. Գերցեն): Այն կարգերը, որ աշխարհին և սեփական ժողովրդին ներկայացվում էր որպես ամենահեղափոխականն ու ամե-

<sup>1</sup> «Սովետական գրականություն», 1988, № 1, էջ 134:

նաառաջադիմականը, ըստ էության լի էր միջնադարյան խավարամտությամբ, հավատաքննական ծայրահեղ դաժանությունների անգիտությամբ։ Սարսափի ու անօրինականությունների մեջ ծփում էր երկիրը։ Ամենաշնչին շեղումը հնագանդությունից և ստալինյան ուղղափառությունից՝ կարող էին տանել կառափնարան։

Ստեղծվել էր կազմակերպված հանցագործություններ իշրագործող պետական մի մեքենա, որ մտածված հետեւղականությամբ ծրագրավորում և ոչնչացնում էր երկրի լավագույն մարդկանց։ Քանի միլիոն մարդ զոհվեց և ինչպիսի գլուխներ։ Ո՞վ է հատուցելու նրանց տառապանքի դիմաց և ինչպես... Ինչպիսի սրտեր են սեղմվել անզոր կատաղությունից՝ և անելանելիությունից։ Ինչքա՞ն արցունք է հեղվել։ Մինչև գնդակահարվողի վրա կրակելն իսկ՝ մարդը հավատացած է եղել, թե ինչ-որ թյուրիմացություն է կատարվում, որ դաժանությունը և անգիտությունը չէին կարող այն սահմաններին հասել, որ այդ ամենը հրահանգավորվեր ժողովուրդների առաջնորդից և իրագործվեր նրա կամքով, գիտությամբ ու վերին կամեցողությամբ։

Խոսել ու գրել այնպես, ինչպես խոսել ու գրել է Պարույր Սևակը այդ տարիներին՝ ոչ միայն համարձակություն պետք էր ունենալ, այլև խիզախություն ու սեփական խղճի ու պատվի խոր զգացողություն, նաև իր կյանքը, որդիների ու հարազատների կյանքը անվերապահորեն վտանգի տակ դնելու վճռական արիություն, ինչպես այդ տարիներին արեցին ոռւս գրողներից շատերը՝ Բ. Պատեռնակը, Վ. Դուդինցը, Ա. Լ. Տվարդովսկին և շատ ուրիշներ։

Եղան այդօրինակ համարձակներ. կանգնեցին անվախ և գիտեին, որ իրենց չեն ներելու դա: Իր վերջին գիրքը՝ «Եղիցի լույսը», Պարույր Սևակը գրեց 60-ական թվականների երկրորդ կեսին (1964—67 թվականներին), սահմանագծային ժամանակաշրջանում, երբ խրուշչովյան դեմոկրատացմանը փոխարինեց Բրեժնև-սուլովյան, ասում են լճացման, բայց իսկական տիղմաթաղման շրջանը, երբ պահպանվեց ամեն ինչ նախկինի պես, միայն կամայականությունների ու բռնությունների գաղանային բնույթը փոխարինվեց ծածուկու գաղտնի թալանով, դաժանովյան նենգափոխված ձևերով:

Երկիրը նորից ընկավ ճահճային տիղմի մեջ, և խորասուզվում էր ժամ առ ժամ՝ շնչառեղձելով բոլոր ազնիվ ու ճշմարիտ մարդկանց, բոլոր իսկական հայրենասերներին:

Նոր հիասթափություն բերին խրուշչովյան ժամանակները: Բանաստեղծը, ասես, արգելափակոցի առջև՝ տեսնում էր մյուս ափը. բայց ո՞վ էր լաստանավը մոտեցնողը: Նա կարծում էր, որ երկրի գեմոկրատացումը կշարունակվի, և ինքն էլ առավել հնարավորություն կունենա ճշմարտություն ասելու մեր կյանքի ու մարդկանց մասին: Բայց գնալով հիասթափվում էր և պարզ էր դառնում, որ խրուշչովյան վերակառուցումը նույնքան կիսատ-պուատ է, ինչքան որ թույլատրված ազատություններն ու գեմոկրատիան: Խոր հիասթափություն էր իշնում վրան, ու այն երազանքը, որ թվում էր իրականանալու է արդեն, դառնում էր խաբկանք:

*Մի ժանիքավոր թախիծ էլ հիմա*

*Մխվել է իմ մեջ, ինչպես անձավում,*

*Եվ հոշոտում է իմ էությունը:*

Զկար հուսադրող որևէ ձայն, հակառակը, լսվում էին նոր զգուշացումներ՝ դեմոկրատական ազատությունների արգելման ու սահմանափակումների երևան գալու հնարավորության։ Սևակը բանաստեղծի բնազդով զգում էր, որ կարճատես է լինելու այն ամենը, ինչին հասավ ժողովուրդը այդ տարիներին։

Արդեն 1964-ի փետրվարին գրած «Թախիծի երկարությունը» բանաստեղծության մեջ նա համոզված էր, որ երադախաբության պես մի բան է տեղի ունեցել. իրականում, ըստ երեւյթին, ամեն ինչ մնացել է նույնը։

**Չէ,**

Երազախաբ լինելուց երբեք զավակ չի ծնվում...

Իսկ այդ օրերին մի այլ բանաստեղծության մեջ, որ վերնագրված էր «Հասարակ պահանջ», բանաստեղծը ձեակերպում էր ամբողջ ժողովրդին ու մտավորականությանը համակած հասարակ թվացող, բայց ըստ էության կարևորագույն հարցին պատասխան ստանալու անհնարինությունը։

Իմ ուզածը կարծում եք թե մի մեծ բա՞ն է,

Ես շեմ հայցում երջանկություն,

**Չէ,**

Տանջում է ինձ հասարակ մի՛ ցանկություն՝

Պա՞րզ տեսնելու,

Պա՞րզ տեսնելու ցանկությունը։

**Չէ,** տալիս եմ

Իմ բովանդակ կարողությունն ու կուրք ես

Մի հասարա՞կ բանի համար՝

Պա՞րզ տեսնելու գեթ այն բանուկ ճանապարհը,  
Որով քայլում ենք բոլորս՝  
Չիմանալով, թե մինչև ո՞ւր,  
Ինչի՞ համար  
Եվ արդյոք ի՞նչ նպատակով...

Պարույր Սևակը «զորանոցային սոցիալիզմի» «բանուկ ճանապարհի» մասին էր խոսում, նրանով անցնող ժողովուրդների երթի, որ առաջմ դուրս էր եկել մի ափ, որտեղ բռնանում են մարդու տարրական իրավունքների վրա ու զրկում նրան ազատություններից, լցնում բանտերը, ուր պետությունը սերտաճելով բյուրոկրատիայի հետ, վերածվել էր մի վիթխարի պատժապարտող մեքենայի և գործում էր երևակայությունն անգամ փշաքաղող հանցանքներ:

Այդ ճանապարհը փորձում էին շարունակել... Եվ այս-  
տեղ էր, որ հուսահատվում էր բանաստեղծը, այստեղ էր,  
որ նրան համակում էր ճանապարհը, որով անցնում էին,  
գեթ պարզ տեսնելու ցանկություն, հասկանալու այդ ճա-  
նապարհի նպատակներն ու խնդիրները:

Պարույր Սևակը շատ լավ էր գիտակցում, որ ավելի  
ծանր զրություն է ստեղծվել և ավելի վատ ժամանակներ են  
գալու: Տասնամյա միջոցում երկիրը չհասավ ո՛չ տնտեսա-  
կան և ո՛չ էլ գաղափարական վերափոխումների:

Խորհրդային մտավորականության այն թևը, որ մեծ  
հույսեր էր կապում խրուշչովյան «ոեֆորմացիայի» հետ, խոր  
հիասթափության մեջ ընկավ դեռևս գլխավոր քարտուղարի  
օրավուր աճող հեղինակության օրոք: Բոլորի համար էլ  
պարզ էր, որ Խորհրդովը ոչ մի արմատական բան չի ձեռ-

նարկելու։ Եվ օգտվելով բացախոսության այն ժամանակ-վա թույլատրելի սահմաններից, գրողներն ու արվեստագետ-ները ստեղծեցին բավական համարձակ ստեղծագործություն-ներ՝ ճշմարտության դիրքերից։

Ամբողջ երկիրը շնչում էր նորանվաճ ազատություննե-րի ոգով։ Բայց վախն ու կասկածը դեռ կար, և հիմա միայն քչերն էին համարձակվում սեփական գրաքննության հսկո-ղությունից ազատվել։ Այս տարիներին հրատարակվեց Պա-րույր Սևակի «Մարդը ափի մեջ» գիրքը, որ հիմնովին շրր-ջափոխեց հետշարենցյան ամբողջ գրական զարգացումը։

Արդեն իսկ նա հասել էր մեծ հեղինակության ու համ-բավի՝ հրատարակելով «Նորից քեզ հետն» ու «Անլոելի զան-գակատունը», բայց ընթերցողի սեղանին դնելով «Մարդը ափի մեջ» գիրքը, նա լծվում էր այն հեղափոխական գոր-ծին, որն, ըստ էության, արդեն սկիզբ էր առել կուսակցու-թյան քաղաքականության մեջ 20-րդ համագումարով։ Պետք էր ազատվել նախորդ շրջանից հոգեբանորեն՝ գլխա-վորապես քաղաքական տեսակետից։

Ա՛խ, այդ պաշտամունքը, որ ձեւը է փոխում,  
Ինչպես մոր մեջ սաղմը,  
Բայց ծնվելիս ծնվում միշտ մանուկի նման՝  
Ուղեղը դեռ անբան և աշքերը դեռ գոց։

«Մարդը ափի մեջ» գիրքը խոստովանություն էր. խոս-տովանություն մի մարդու, որ դուրս էր ելել 30—40-ական թվականների մղձավանջից և հիմա կես հավատով ու կաս-կածով նայում էր ներկային և, հավատալով նոր օրերի գա-լըստյանը, երազում էր լույսի լիություն ու հաղթանակ։

Եվ աշքերս են սոված.  
Չի կշտացնում լույսը....

Թեև նոր է սկսվում լուսաբացը, բայց դեռ մութ է, և խավարի համար պատասխանատուն ոչ թե բանաստեղծի մըտքերն են, այլ աշքերը.

...Որ քեզ են ուզում կենդանացնել:

Որովհետև «արշալույսից առաջ,—ինչպես ասում է բանաստեղծը,—քունն ավելի խորն է».

Նահանջած են լինում մղձավանջերն արդեն,  
Օդը երազներ է տեղափոխում:

Սևակը շատ լավ էր հաղորդում այդ ժամանակները (50-ական թվականների կեսերից հետո), մեր մարդկանց համակած զգացումների, տրամադրությունների ու մտքերի ընթացքը, բանաստեղծորեն ձևակերպում նրանց թաքուն ակնկալիքներն ու սպասումները.

Հիմա հավատում են երազներին  
Շատ քշերը կյանքում,  
Ես նրանց մեջ չկամ:  
Եվ քանի որ չկամ՝  
Ինձ խղճում եմ  
(Նախանձելի բան չէ խելքի գալը)...

Եվ խսկապես, բանաստեղծը խելքի էր եկել դեռ շատ վաղուց՝ 30-ական թվականներից, երկարատև ու տանջալից ձանապարհ՝ էղ կտրիլ՝ ապրելով ազատության խսկական ե-

րազների կարոտով ու տիսրությամբ։ Նա զգում էր, որ արշալուսի մոտեցումով մոտենում է «մարդկանց արթնացումը»։ Իբրև ճշմարիտ հեղափոխական, նա ամենից շատ հույսը դնում էր հենց այդ արթնացման վրա—մարդկանց արթնացման վրա։

...Արշալույսից առաջ քունն ավելի խորն է,  
Բայց մոտիկ է նաև արթնացումը։  
— Կբացվի նոր մի օր՝  
Ինչպես աշքակապը։  
(Մանուկ հասակում են պահմտոցի խաղում)։  
Կբացվի նոր մի օր՝  
Ինչպես վիրակապը  
(Երեկվա խոր վերքն է սպիացել արդեն)։

Իրոք, 60-ական թվականներին սպիանում էին արդեն երեկվա՝ 30—40-ական թվականների խոր վերքերը։ Էլ չէր կարելի երեխայական պահմտոցի խաղայւ իսկապես, Սևակը հավատում էր, որ մի օր վիրակապը կքանդեն, և կերևա վերքի սոսկալիությունը։ Այդ օրը կգա, ճիշտ է, և այդ օրն էլ հենց կարթնացնի մարդկանց, կքանդի նրանց աշքակապը, և մարդիկ կլցվեն հինը կործանելու և աշխարհը նորացնելու կամքով ու վճռականությամբ։

«Մարդը ափի մեջ» գիրքը շնչում էր իրականությունը հեղափոխականորեն վերափոխելու տրամադրություններով և հենված էր նզովյալ անցյալից հրաժարվելու լիակատար համոզման վրա, որ միայն այդ հրաժարումով կգա նոր օրն ու կբացվի արշալույսը։

Այդ օրերին նկարահանվեց Գրիգորի Զուխրայի «Մաքուր երկինք» ժապավենը, ուր պատկերված էին պատերազմի ավարտից հետո վերադարձած մի օդաշուի կրած տառապանքները կարգի պահապան մարմինների ձեռքից, և այն ամբողջ բարոյական կտուանքները, որ տանում է այդ բոլորովին անմեղ մարդը։ Օդաշուն հասնում է գրեթե ինքնապանության շեմին։ Նրան երևի այլ բան չէր մնում անել։

Հերոսի ոսկե աստղը, որ նրա բուռն են դնում՝ ինչպես ծաղր, չի փոքրացնում եղելության ու նվաստացման ամբողջ ողբերգականությունը։ Հարյուր հազարավոր անմեղ ռազմաճակատայիններ, որոնք գերի էին ընկել և չէին հասցրել ինքնասպանություն գործել, Սիբիրի աքսորավայրերում կրած անմարդկային զրկանքների, ծաղրուծանակի դիմաց այսօր արդարացվում էին։ Արդարության հաղթանակի այդ փաստը հուզական խոր ալիքով պրկում էր սրտերը և թեթեվացնում հոգիները, բայց մյուս կողմից՝ մարդկանց մեջ շարունակում էր հարուցել կասկած ու վարանում եկած օրերի, ազատությունների շարունակելիության հնարավորության նկատմամբ, որովհետև եղեռնագործություններն այնքան շատ էին կատարվել և հարատեև այնքան երկար տարիներ, որ մարդկանց մեջ (ինչպես այսօր) դեռ մնում էր անվստահությունը թույլատրված դեմոկրատիայի և ազատությունների հանդեպ։ Ուժեղ ու աներեր, ժայռակոփի ու հաստահիմն էին այն հիմնարկություններն ու դրանց տրված իրավունքները, որոնք և որոնցով իրագործվում էին բոնություններն ու անօրինականությունները մեր երկրում։

«Մի՛, մի՛...» վերնագրով բանաստեղծության մեջ Սեվակը թառռանել է կասկածի ու անվստահության այդ

տրամադրությունները։ Քնարական հերոսը համոզված է, որ իրականում ազատություններ ձեռք շեն բերվել։ Եվ դիմելով ընթերցողին խնդրում է չհուսադրել իրեն.

Եվ մի՛ հուսադրիր։  
Ես շե՞մ հուսահատվել։  
Իմ տարիքում, ճիշտ է, էլ շեն առնում հասակ,  
Բայց մարդն էլ է ընձուղտ,  
Եվ իմ վիզը հիմա  
Երկարում է—ձգվում  
Ու բարձրանում  
Այս բազմահարկ բոլոր շենքերից վեր,  
Որ պաղ հորիզոնից մի բերան մով պոկի  
Ու որոճա՞ դանդաղ։  
Ինձ մի՛ հուսադրիր։  
Մի՛ նկատիր նաև։  
Ես այլևս չկա՞մ,  
Ինչպես չկա երկինք  
  
(Լուրթը խարկանք է լոկ):

Շատ շուտով երևաց, որ, իրոք, մաքուր, լուրթ, կապույտ երկնքի հիմնադրույթը լոկ խարկանք է, և իրավացի էր բանաստեղծը՝ երկրում կատարվող վերափոխությունների հանդեպ կասկածի ու անվատահության դիրքորոշումով։

Խսկապես, դա մի ժամանակաշրջան էր, երբ սկսվել էր ինչ-որ բան, բայց հայտնի չէր, թե ինչ, և սպասվում էր ու ակնկալվում ինչ-որ բան, բայց հայտնի չէր, թե ինչ... Մըթնոլորտը հագեցած էր անձրևից առաջ խտացող թանձր հեղ-

Ճուկով։ Իրոք, պետք է՞՛ ընձուղտի վիզ ունենայիր, որ երկարելով երկնքին կարողանայիր «մի բերան մով պոկվել» (այսինքն՝ զով ազատության շնչաբաժինը) և որոճալ դանդաղ (վայելել երանությամբ)։ Ազատության կարոտից շնչահեղձում էր բանաստեղծը ծը։ Եվ շնայած դրան, աշխատում էր ընթերցողին հասցնել և արգելված պտուղը»—ճշմարտությունը և դրա հետ միասին նրան հասնելու հորդորն ու կողմնորոշումը։

Մեծ ջանքերի և բանաստեղծական լարումների գնով էր ձեռք բերվում ընթերցողին «հեռվից-հեռու» երկու բառ ասելու հնարավորությունը։ Այդ երկու բառն էլ արդյո՞ք ճիշտ էր թարգմանում բանաստեղծին, արդյո՞ք ճշմարտությունը տեղավորվում էր այդ հագուստի մեջ։ Բանաստեղծը գիտեր, որ շատ փոքր է իրեն հասկանալու և ճշմարտությունը կարդալու հնարավորությունը։ Բայց, այնուամենայնիվ, նա շարունակում էր բազմիմաստ զրույցը ընթերցողի հետ։

Բանաստեղծական շարքերից մեկը Սևակը վերնագրել էր «Ականջդ բեր ասեմ»։ Մա հենց այն է, ինչին դիմում էր բանաստեղծը՝ գաղտնի ու ծածուկ իր մտքերը (որ չէր կարելի հրապարակ հանել) ընթերցողին հասցնելու համար։ Մի բանաստեղծության մեջ Սևակը ասում էր՝ շեմ հարգում նրանց,

Ովքեր վատնում են  
Իրենց ուժերը փսփսուկի մեջ,  
Մինչ կարող էին բարձրածայն խոսել  
(Երբեմն նաև ես ինձ շեմ հարգում)....

Ելք շուներ բանաստեղծը. այո՛, նա դիմում էր ճշմարտությունն ասելու բոլոր ձևերին. բայց երբեք՝ փսփսուկի. նա միշտ էլ ճիշտ ու ճշմարիտ էր բոլորի առաջ, ասում էր բացարձակ ճշմարտություններ, որոնց համար նրան երբեք չէին ներելու ու շներեցին։ Սեփական մտածելակերպը արտահայտելու բնութագրությունը տվել է ինքը՝ Սևակը «Հանգըստացրու ինձ» բանաստեղծության տողերում։

Ինչի՞ համար է այս երկմտանքը։  
Չէ՞ որ ստանցվել եմ ես ազնվորեն։  
Թող որ ամեն բան բաց պատկերված չէ,  
Սակայն ամե՞ն բան պատկերացված է։

Եվ, իրոք, ամեն բան բաց պատկերված չէր Սևակի բանաստեղծության մեջ։ Խոր ու ճշգրիտ էր սակայն հաջորդ նախադասությունը. «Սակայն ամեն բան պատկերացված է»։

«Մարդը ափի մեջ» գրքում չեք գտնի մի բանաստեղծություն, որ գրված չլինի առանց իրականության, իրական հարաբերությունների ամենաճշգրիտ ու ամենաազնիվ ընկալման, առանց երկրի անցյալ ու ներկա կյանքի ամենառեալիստական պատկերացման և առանց այն գրգիռների, որ ստանում էր բանաստեղծը ամեն անգամ հպվելով իրական հարաբերությունների դաժանությանը, համատարած կեղծիքին ու ստին, խոսքի և գործի ծայրահեղ անհամապատախանությանը։

Պարույր Սևակը շատ լավ էր հասկանում և համոզված էր, որ «...պոեզիան երբեք մանր-մունը բաներից չի ծնվում», և որ իր ստեղծագործությունը հասցեագրված է ժողովրդին, որ անհնարին տառապանքներ է կրել, տասնամյակնե-

բով ապրել է համատարած սարսափի մեջ, զրկված է եղել ազատություններից, ինքնաճանաշման հնարավորություններից. նրան չեն օգնել գրողները, հակառակը, խորացրել են հավատը ստի ու կեղծիքի նկատմամբ, պատվաստելով ճորտական միտք ու պահվածք, հաշտվելու ու ենթարկվելու, (ներելու ու տանելու) հոգեբանություն, արյունագոյացում, պատրաստելով հոգևոր ստրուկներ, իդեալների, բարոյական արժեքների փոխարեն առաջ մղելով կեղծ իդեալներ և ապարոյական մտածումներ։ Ժողովրդին անհրաժեշտ է օգնել և ամենից առաջ նրանից դուրս հանելով վախր ճշմարտության հանդեպ։

**Աղաչում եմ,—**

**Մի՛ վախեցեք անկեղծ խոսքից.**

**Անկեղծ խոսքը չի սպանում,**

**Փակ խոցեր է միայն բանում։**

**Մի՛ վախեցեք**

**Ժանգուտ թասից ժանդ քերելուց.**

**Նա դրանից չի փչանա։**

**Մի՛ վախեցեք**

**Կեղծի մասին ճիշտ գրելուց.**

**Նա դրանից կքշանա։**

Պարույր Սևակը գիտեր, հասկանում էր, որ պիտի գնալ ինքնազոհաբերության. իր բանաստեղծությամբ նա մարդկանց ընտելացնում էր հենց այդ առաքելությանը։

«Լուսնահար կարոտ» բանաստեղծության մեջ նա դուրս է բերում շեղ, սայթաքուն կտուրներով վազող լուսնահար

տղայի քնարական կերպարը. կյանքը կրկին վտանգելով՝ լուսնոտ-լուսնահար այդ տղան (որ այլևս չի ուզում ենթարկվել շղթաներին ու կապանքներին) նորից մղվում է դեպի ազատությունը, ինչին կարոտել է ու տառապել, ինչի համար պատրաստ է կյանքը զոհաբերել: Նա գիտեր, որ «շեղ, սայթաքուն կտուրներով, «մինչև անգամ շանթարգելով» դեպի ազատություն գնալը անհնարին դժվարությունների հետ էր կապված և ամենից առաջ պահանջում էր սեփական կյանքի զոհաբերություն:

Աննշան իսկ կանչը, թեկուզ «Ճշալու պես ախ» անելը լուսնոտին կարող էր կյանք արժենալ:

Բանաստեղծի հուսահատությունը գոյանում է այն բանից, որ «Ճայն տվող» չկա, «իր վտանգված կյանքի համար» Ճշացող չկա, այլապես պատրաստ է, «երկյուղ չունի» ներքին ընկնել և արյամբ նույնիսկ հալեցնել «Ճյունը մայթում» (դա էլ գործ է): Այս պատկերը ենթաբնագրային խորք ունի. դա ինքնազոհաբերության պատբաստակամության արտահայտությունն է, եթե միայն ըմբռնվի այդ զոհաբերությունը և սառուցն ու ձյունը զուգահեռվի իրականության կարծը սառնության ու դաժանության հետ:

\* \* \*

«Մարդը ափի մեջ» գրքում Պարույր Սևակը տեղադրել է «Նամակ» բանաստեղծությունը (գրել է 1963-ի փետրվարին): Մտահղացման տեսակետից ասելիքի ամբողջ սուր, հոգին կտրատող ու ցնցող բովանդակությունը պահ տալով ենթաքնագրին, բանաստեղծը, թվում է, սովորական, բայց մի քիչ անհասկանալի նամակ է գրում սիրած էակին: Ընդ որում,

նամակի միջնամասերում պատմում է, թե ինչպես ձմեռ ժամանակ դժվար է անցնել անտառի այն ծանոթ շավիղով, որով անցել են ամռան օրերին։ Որովհետև, ոստ ու ճյուղերը փակում են ճամփադ և ճանկում դեմքդ, «աշքիդ սպառնում»։ Տրամադրության մի զարմանալի փոփոխություն է կատարվում. «Ես քայլում էի աղջամուղի մեջ Ու քայլում էի նաև... մտացիր»։

Ի՞նչ կապ ունեն ձմեռ ժամանակ անտառով անցնող ճանապարհի հետ կապվող դատողությունները... աղջամուղի մեջ մտացիր քայլող քնարական հերոսի տրամադրության հետ։ Այս ամենը հասկացվում և ըմբռնվում է նաև որպես բանաստեղծի քմայքների արտահայտություն։ Նա երբեմն «անտրամաբանական» էր դարձնում բանաստեղծությունը, տրամաբանականին ավելի դյուրին հասնելու համար։ Այսպես էլ հիմա է. բացվում են քնարական հերոսի հուզական աշխարհի այն անկյունները, որոնցում սեղմված-ցրված են գլխավոր մտահոգությունները։

Ե՞րբ են թաքցնում մարդիկ ձեռքերը, ե՞րբ ոտքերը... և ամենագլխավորը, ե՞րբ են թաքցնում իրենց դեմքը։

Ենթադրվող պատասխանների մեջ ակամա կորչում է բանաստեղծի ենթաքնագրային ասելիքը։ Հաստատական շեն պատասխանները, սակայն հուշում են դեմքը թաքցնելու իրական պատճառները։

Մարդիկ ե՞րբ և ինչո՞ւ են թաքցնում դեմքը. գուցե ամոթից՝ հարցնում է բանաստեղծը՝ ակնարկելով իրականության մեջ գերիշխող երեսպաշտությունը և ոչնչից շխորշող անամոթությունը, գուցե՝ կարոտից՝ հարցնում է բանաստեղծը՝ ակնարկելով երազելին բաց աշքով տեսնելու ան-

Հնարինությունից ծնված հուսահատությունը, գուցե՞՞ ձանկող ձյուղերից այս չար, հարցնում է բանաստեղծը՝ ակնարկելով կյանքի ձմեռային անհրապույր ցրտությունը, «կուշ գալ եմ ուզում քո թևերի տակ», — ասում է բանաստեղծը՝ ակնարկելով երազելի հարազատի ջերմությամբ մխիթարվելու ու գուրգուրվելու անհնարին ցանկությունը:

Այս նամակը բանաստեղծը գրում է իր այն հարազատին, որին բավական երկար ժամանակ է, որ չի տեսել, իր այն սիրելուն, որին տեսնելու կարուր արդեն մղձավանց է դարձել նրա համար.

«Արդյո՞ք քեզ երբ եմ, ե՞րբ եմ տեսնեու...  
Զմե՛ռ ու ամա՞ռ,  
Աշո՞ւն ու գարո՞ւն...  
Իսկ ո՞ւր է տարվա մե՛ր եղանակը,  
Այն հինգերորդը...»

Տարվա հինգերորդ եղանակի դադարիարը խորը հեղափոխական սլացք ունի իր մեջ. թվում է, այն չի տեղավորվում տարեշրջանի բնական բաժանումներում և մի որոշ իմաստով արտառոց, անիրականանալի ցանկություն է: Բայց տարվա հինգերորդ եղանակը, երեկի թե, հենց այն է, որ փոխում է տարվա շորս եղանակների ոչ թե հերթակարգը, այլ ծնվում է դրանց միջից որպես ազատության ու երազելի արդար օրերի աստղային ժամ, որպես վերափոխված իրականության նոր օրերի շարընթաց, որպես իդեալին ու երազանքին հասնելու բավարարվածության ու երջանկության ակնթարթ:

Տարվա հինգերորդ եղանակը իրականացումն է այն բանի, ինչին ձգտում է մարդը և... հասնում: Չէ՞ որ լինում են

նաև այդպիսի օրեր, երջանկությանն ու իդեալին հասնելու  
օրեր....

«Իսկ ո՞ւր է տարվա մե՛ր եղանակը,  
Այն հինգերորդը... Մի՞թե չի՛ գալու»...

Իր ամբողջ կյանքում, մինչև եղերական մահը, Սևակը սպասեց և հուսաց այդ հինգերորդ եղանակի կենդանացնող զողանքներին։ Նրա բանաստեղծությունները, թեև հաճախ հոռետեսական վերափոխումների հեռանկարի հանդեպ, սակայն լի էին արդարամիտ հասարակության կառուցման հնարավորության նկատմամբ աներեր հավատով։ Նա նույնիսկ ներկայի մեջ էլ տեսնում էր հույսով ուրախանալու առիթ, գոհություն և «փառք աստծու» ասելու կարիք։ Նա սառուցի վրա խարույկ էր վառում և շերմանում՝ «հույսի շհամտեսած անուշությամբ»։ Բանաստեղծի կյանքն էլ պայքար եղավ հենց կեղծիքի այն երկու զորեղ հսկաների դեմ, որոնցից մեկի անունը վերագրում է, իսկ մյուսինը՝ ենթադրություն։ Սոցիալիզմը (ստալինյան-զորանոցային սոցիալիզմը) գործածության մեջ դրեց վերագրումների մեթոդը կյանքի բոլոր բնագավառներում։ Այն բարձրացվեց պետական օրինականության աստիճանին։ Մենք պետք է հավատայինք այն ամենին, ինչ ասվում էր և պետք է ենթարկվեինք այն ամենին, ինչ ենթադրվում էր։

Ես կարող եմ ենթադրել,  
Թե այս քոմը արթնություն է,  
Եվ այս ծանր պարտությունը,  
Չտեսնված հաղթություն է։

Ես կարող եմ ենթադրել,  
Բայց ի՞նչ օգուտ...

Ենթադրվածը իրականության տեղ ներկայացնելու գործընթացը այնքան ամենօրյա դարձավ, որ սկսեց տարածվել ամենուրեք, մանավանդ տնտեսական բնագավառում, ուր շեղածը եղածի տեղ էր ծախվում և որոնելին՝ գտածի:

Տառապելով ու հուսահատվելով տարվա հինգերորդ եղանակի գալստյան խավարամած հորիզոններից, Սևակը, ինչպես այն ժամանակ յուրաքանչյուր ճշմարիտ ու ազնիվ հայրենասեր, ելք էր որոնում, ելք ստեղծված իրադրությունից, ազատվելու ելք հասարակական հարաբերությունների շարակը ելած ծանրագույն այն բեռից, որ ստեղծվել էր կեղծիքով և ճշմարտության բացակայության թելադրանքով:

Ելք շեք ծախում՝  
Հազա՞ր ափսոս,  
Թե չէ մուտքը իմ կողքին է,  
Չի պահանջվում և մուտքի տոմս—  
Քիչ է մնում քաշեն թևից:

Իսկապես, արդեն ավարտված էր համարվում սոցիալիզմի կառուցումը մեր երկրում և բաց էր ու ձրի կոմունիզմի մուտքը: Անգամ որոշվեց այնտեղ ոտք դնելու տարեթիվը՝ 1980: Հենց այդ ժամանակ էր (60-ական թվականների երկրորդ կես), երբ վերակառուցման սկսված, բայց չափազանց դանդաղ ընթացքը դեմ առավ բրեժնևյան շրջանի ղեկավարների ահաբեկված ինքնարիթնացմանը: Երկիրը դարձյալ գնաց նախկին տնտեսական ու քաղաքական զարգացման ու-

դիներով (ստալինյան ժամանակների) և ապահովագրվեց այդ ընթացքի անձեռնմխելիությունը։ Քիչ թե շատ մանր-մունք ազատությունների համար օրենսդրական հրամաններ շեղան, այլ հրամցվեց մի փոքր «գայկաները» թուլացնելու հրահանգը։

Երկրի դեմոկրատական ընթացքը կանխարգելվեց. նորից աշխարհի բոլոր օդերևութաբանական կայանները գուշակեցին տարվա հինգերորդ եղանակի գալստյան անհնարինությունը։ Իսկ արդեն փոքրինչ ազատ շնչառությունը համտեսած մտավորականությունը ընկավ էլ ավելի ծանր վիճակի մեջ։ Դեմոկրատիան նենգափոխվեց ստրկահաճությամբ, հումանիզմը՝ մարդկանց ճակատագրի հանդեպ անտարբերությամբ։ Ստեղծվեց մի դրություն, երբ բանաստեղծը գրեթե տեղ չէր գտնում իր համար։

«Աշնանային վալս» բանաստեղծությունը շիկացած կըք-քոտությամբ է արտահայտում այդ ժամանակները նրան համակած ողբերգական հուսահատությունը և անելանելիության աքցանող-խեղդող ինքնազգացումը։

Օդը հաստանում է մառախուղով,  
Ու մշուշով երկինքն է ցածրանում.  
Որ բարակի թելը համբերության,  
Ու վեր բարձրանալիս ճիշ-ճնգոցով հատվի։  
Եվ ամենքըս հիմա վատ բաներ ենք հիշում,  
Եվ ամենքըս հիմա հոռետես ենք դարձել,  
Ամեն ինչից զզված,  
Զզված նաև մեզնի՛ց։  
Եվ մեր քիթ ու մոթից բմծիծաղ է կաթում,

ինչպես ջրհորդանից՝ անձրևաջուր կեղտու,  
 Քիվից՝ պղտոր կաթիլ,  
 Տտիպ տաղտուկ՝ հոգուց...  
 Կաթուկ-կաթուկ կաթուկ,—  
 Հերն անիծած...

...Նույն է պարում կյանքը,  
 Նույնն է պարում մի՛տքը:  
 Այս ի՞նչ խենթություն է,—  
 Հերն անիծած...

Թարգամանելով մարդկանց համակած տրամադրությունների զգայական խորքերը, Պարույր Սևակը մոտենում էր մի անհահանջ, անհերքելի իրողության, որի սահմանները թաղված են ճշմարտությունից սկիզբ առնող այն անարտահայտելի խորքերում, որոնք երևում են միայն զրնգուն, պայծառ, շողարձակ մաքրության մեջ. այդ դեպքում զարմացնում է խորքի մերձավորությունը, բայց իրականում այն չենթադրվող հեռավորության վրա է:

1960-ական թվականների գրողներից և բանաստեղծներից և ոչ մեկը չկարողացավ հասնել ժամանակակից մարգու հոգեբանության, հուզաշխարհի անհատական և անձնաշեշտ գծերի այնպիսի ճշմարտացի վերաբարության, ինչպես Պարույր Սևակը: Նրա բանաստեղծությունները խորապես արտահայտում էին և այսօր էլ արտահայտում են ժամանակակիցների շասված ու նույնիսկ դեռևս ձևակերպումների կարուտ մտքերը, տրամադրությունները, վերաբերմունքն ու գնահատումները աստիճանաբար անելանելի դարձող կյանքի հանդեպ:

Սիրո կապանքի և տառապանքի  
 Հարցերն են անվերջ պատասխան գտնում,  
 Եվ բառերն իրար ձգում են կրկին,  
 Ինչպես ողնաշարն՝ իր իսկ ողերը,  
 Եվ... ստացվում է  
 Ահավոր խոսքի ահավո՞ր կմախք.  
 — «Այսպես ապրելը անկարելի է»...

Իրոք, այդպես չեր կարելի ապրել ու շարունակել գոյություն ունենալ։ Բայց ի՞նչ կարող էիր անել. ամենուրեք նույն օրենքն ու կարգն էր, հասարակությունը զեկավարող նույն ամենակարող բյուրոկրատական մեքենան, խղճի ու պատվի բացակայությունը, երեսպաշտությունն ու կեղծիքը, խոսքի և գործի անհամապատասխանության անպատիվ օրինականությունը, անձեռնմխելի համարվող արժեքների նույն ծաղրուժանակը։

Իրոք. «այդպես ապրելը այլևս անկարելի էր»։ Բանական անձինք, ինտելեկտուալ կարողությունների տեր մարդիկ, այն մարդիկ, որոնք զանազանում էին թացն ու շորը, արդարն ու անարդարը, իդեալն ու հակաիդեալը, հասկանում էին մարդկանց գոյության ամբողջ ողբերգականությունը։ Մտավոր աշխարհի մարդիկ, հատկապես հասարակության ցավերն անկողմնակալ և սուր զգացող մարդիկ, ստորացված ու ջախջախված, հուսահատ ու գրեթե կիսախելագար ապրում էին պատմահասարակական այդ աղետի ամբողջ մղձավանջը։

Դեռևս մեկ տասնամյակ առաջ՝ 1957-ին գրած «Պատկերացնում եմ» բանաստեղծության մեջ՝ սերնդափոխու-

թյան և մարդկային կյանքի հաջորդականության երևույթը՝ իմաստավորելով, Սևակը բանաստեղծորեն ձևակերպում է այն ճշմարտությունը, թե՝ մեծերի հոգսերն ու տառապանքները, կասկածանքներն ու երազանքները նոր, եկող սերունդների համար խնդիր չեն ներկայացնում, և ոչ միայն խնդիր չեն ներկայացնում, այլև ինչ-որ տեղ, երևի, մնալու են անհասկանալի։ Արդյո՞ք դա այդպես է.

Ինչ ես ատել եմ, ինչ ես ատում եմ՝  
Նա նույնիսկ իր շուրջ չի նկատում էլ,  
Ինչ չեն ներել ինձ՝ նրան ներում են,  
Ինչ ես սիրել եմ՝ դրան տիրում է,  
Ինչին ձգտել եմ, ինչ երազել եմ՝  
Նա դրան արդեն վաղո՞ւց հասել է, —  
Եվ չի՛ հասկանում իմ տենչանքը նա  
Եվ չի՛ հասկանում իմ տանջանքը նա...

Սա գրված է եկող սերունդների՝ երիտասարդության համար, և միտքն այն է, թե նրանք կհասկանա՞ն արդյոք՝

Կյա՛նքը,  
Տանջա՛նքը,  
Զա՛նքը պապերի...

Այսօր, մենք կարող ենք ասել, որ հասկանում ու ըմբռնում ենք այն սերնդի հերոսական խիզախումը, որ 1950—60-ական թվականներին կարողացավ վեր բարձրանալ պաշտամունքի հարկադրանքից և ստրկությունից ու կյանքի գնով ոչ միայն պահպանել իր մարդկային պատիվն ու խիզը, այլև նպաստել հասարակական հարաբերությունները վերա-

փոխելու, կյանքը վերանորոգելու և հասարակությունը վերադաստիարակելու այն սկզբանը հեղափոխական շարժմանը, որ գժիքախտաբար ընդհատվեց Բրեժնև-սուլովյան դավագրության պատճառով։

«Վերակառուցման սկզբունքներում» («Պրավդա», 6 ապրիլի, 1988) «ավելի շատ սոցիալիզմ» կարգախոսը գնահատված է որպես «կյանքի օբյեկտիվ պահանջ»։

«Ավելի շատ սոցիալիզմ» առաջարկը նոր բարոյաբանություն և տնտեսական հարաբերություններ ստեղծելու առաջարկ է. ընդ որում, դա վերաբերում է ամենից առաջ ժողովրդի ապրուստի՝ աշխատանքի դիմաց վարձատրելու սկզբունքին, որը դեռ իրականացված չէ։

Մյուս կողմից. դա վերաբերում է կյանքի դեմոկրատացմանը, ընտրական համակարգի նորացմանը և նոր համագեմոկրատական ձևերի մշակմանը, սոցիալիզմի և բարոյականության սերտաճմանը, բռնատիրական ձևերից ազատվելուն, խոսքի և գործի համապատասխանությանը, մարդկային ազատությունների իրավաբանական ձևակերպումներին, մարդու իրավունքների պաշտպանությանը, մի խոսքով, այն տիսուր և ամոթալի ժառանգությունից հրաժարվելուն, որ մեզ թողել էր ստալինյան-բրեժնևյան ժամանակաշրջանը։

«Ավելի շատ սոցիալիզմ» պահանջը նույնանում է «ավելի շատ լույս» կարգախոսին, մի պահանջ, որ նույնպես առաջադրվել է այս օրերին<sup>1</sup> և որը բանաստեղծության մեջ որպես հոգևոր հայտնություն և մարդկանց նվիրական իդեալի իրագործման հնարավորության ճանապարհ, քնարեր-

<sup>1</sup>Տե՛ս «Պրավդա», 6 ապրիլի, 1988։

գական կատարյալ դրսեորումներ ստացավ Պարույր Սևակի ստեղծագործության մեջ:

«Եղիցի լույս» (1969) ժողովածուն շատ ավելի առաջ անցավ բանաստեղծի նախորդ գրքերից: Ոչ միայն բանաստեղծության նախկին որակն էր փոխվել, այլև խորացել և թանձրացել էր ժամանակակից մարդու հուզաշխարհի, տրամադրությունների, զգայությունների բանաստեղծական վերարտադրությունը, նվաճվել էր մարդկային հոգեբանության ու ապրումների քնարական այնպիսի կերպավորման մակարդակ, որ խորապես արձագանքում էր դարաշրջանի համամարդկային խորհուրդների և ճշմարտության համաժամակյա մեկնությունների հետ:

\* \* \*

Լույսի ձգտման այն մոլեգին կիրքը, որով համակված է Պարույր Սևակի նույնանուն գրքի «Եղիցի լույս» շարքը, օրինակ, հենց լույսն ինքը որպես գեղարվեստական և բանական ներկայություն, զգացումի ու պատկերի յուրաքանչյուր հասվածում, ամբողջ բանաստեղծական իրադրության ու մթնոլորտի լուսերգային ֆոնը՝ շարքը դարձնում են հիմներգային, որ իր ներսում ունի խորալային բազմաձայնություն և հարմոնիկ գեղունություն, ըստ որում ապահովված է նաև յուրաքանչյուր խորալի ավարտուն և ամբողջական գերն ու բնույթը:

«Լույսի աղբյուրը» բանաստեղծության մեջ Սևակը այն համոզմանն է, որ լույսը ծնվում է մթության խոտացու-մից: Այս միտքը նա հասկանում է ոչ որպես գիտական օրենքի ինչ-որ դրսեորում: Ինչպես որ լույսը բանաստեղծի

Հասկացությամբ հոգևոր երևույթ է, այնպես էլ այդ հոգևոր երևույթի ծննդաբանության մասին է պատմում բանաստեղծը։ Նա ճանաչել է լույսը ավելի, քան մենք ենթադրում ենք։

Իբրև հոգևոր սկիզբ Սևակյան Լույսը շի նույնանում առաջագործական սկզբի հետ, բայց և հենց այդպիսի սկիզբ է, ըստ բանաստեղծի, մարդկության զարգացման ճանապարհին։ Լույսը արարիչ է, ամենատես ու ամենակարող ուժ, մարդկության առաջադիմության զենք և ուղեկից։ Բանաստեղծի համար Լույսը նշանակ ու հավասարժեք է ճշմարտության, ազատության, արդարության և էլի բազում այլայլ հոգևոր ու հասարակական ստացվածքների։

Շարքը բացվում է «Նորօրյա աղոթք» բանաստեղծությամբ, ուր տրված է լույսի ձգտման կրքու ու աննահանջ պահանջի ժամանակակից խորքային, պատմափիլիսոփայական բացատրությունը։

*Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի*

*Ես վախենում եմ,*

*Շատ եմ վախենում*

*Բյուրավոր ու բո՛լթ հավատացյալից,*

*Բյուրատեսք ու սո՛ւտ հավատացյալից։*

*Եթե աստված եք*

*Փշեցե՛ք նրանց բոլոր մոմերը,*

*Մարեցե՛ք նրանց կանթեղներն ամեն,*

*Հանգցրե՛ք նրանց ջահերն այլազան,*

*Որ... եղիցի լույս։*

Խոսքն այստեղ գնում է մի այլ ուղղությամբ։ Ինչոր բյուրավոր ու բոլթ հավատացյալի, բյուրատեսք ու սուտ

Հավատացյալի վառած ջահերի ու մոմերի կողմն է ուղղվում խոսքը, այդ մոմերն ու ջահերը հանգնելու մասին է շրջվում խոսքը։ Մինչդեռ հենց դրանք հանգնելով է, որ կծնվի կույսը։ Մի՞թե պարագոքս չէ։ Կույսը հանգնելով ինչպես կարող է լույս ծնվել։ Իր մարդկային պահանջի մեջ արդարացի բանաստեղծը պարագոքսի վրա չէ, որ այս դեպքում կառուցում է բանաստեղծությունը։ Բյուրավոր ու բութ հավատացյալի վառած լույսն է, որ նա համարում է խավարին զուգակշիռ, բյուրատեսք ու սուտ հավատացյալի վառած լույսն է, որին զոհարերվում է ինքը՝ հավատը՝

### Մաքո՞ւր—վսե՞մը Անկե՞ղծ-անսո՞ւտը։

Եվ դրանից է, որ բանաստեղծը այդպես ընդուժ ու հուսահատ, մոլեգին ու վշտակոծ հարյուրամյակների, հազարամյակների ճշմարտությունն է մեջտեղ բերում իսկական հավատի ու կեղծ հավատի մասին, արդարության և անարդարության մասին, կեղծիքի ու ստի մասին, որ երբեք հավատ չի եղել, բայց դարերով խնկարկվել է բյուրավոր ու բութ հավատացյալից իբրև վերին ճշմարտություն, իբրև վերջնակետ ու դադար ճշմարտության սահմանի։

Պարզ է, որ Պարույր Սևակը նկատի ուներ ոչ միայն և ոչ այնքան անցյալ դարերը, որքան և հատկապես ստալինյան հավատքի և երեսպաշտության ողբերգական ժամանակաշրջանը, այլև մարդկության անցած ճանապարհի այն հատվածները, երբ այդ բյուրավոր ու բութ հավատացյալի տեսքով զանգվածը և «ամբոխը» հնարավոր էին դարձնում հավատի ֆետիշացումը՝ մարդկային հարաբերություն-

ներում այն վերածելով դավադրության, մատնության ու սպանության:

Երբ մարդանհատը վերածվում էր կուռքի, չաստվածը աստծո և սկսում բյուրատեսք ու սուտ հավատացյալի ձեռքով բարձրացվել երկնքից էլ այն կողմ, երբ մարդանհատի մեջ այդ սուտ հավատացյալը դնում էր իր գոյության ամբողջ իմաստն ու նպատակը, երբ մթարվում էին ուղեղները և դիմազրկվում էր ժողովուրդն ինքը՝ սարսափից ու ահից կորցնելով ամեն ողջամտություն, երբ մեջտեղ էր գալիս ամենքի համար մտածող ու խորհող Գերագույնը, հասարակության մեջ աստիճանաբար մարում էին լույսերը և ապահովաբար սկսվում էր խավարի թագավորությունը:

Բյուրատեսք ու սուտ հավատացյալի հանդեպ հավատը ստեղծում է պաշտամունքն այն ամենի, ինչ կապված է խավարի, միջնադարականության, հետամնացության, մըտրակի, բարբարոսական հալածանքների, բարոյական կազմալուծման, ազատության և ճշմարտության ողբերգական կործանման, կախաղանի, բանտ ու աքսորի հետ: Բանաստեղծության ենթիմաստային շերտերում դրված է այս ամբողջի ստույգ գիտակցությունը: Եվ նաև այն, որ հավատը պահում են ոչ թե բյուրավոր ու բութ հավատացյալների աղոթքները (գրանք միտված են սին հավատի «երկարակեցությանը»), այլ նրանք, որոնք մաքառում են այդ երկարակեցության դեմ՝ ջոկելով ճշմարտության լույսը կեղծիքի խավարից.

**Թողություն տուր, Տե՛ր, ծանր խավարին,  
Միայն թե թող նա թողնի հեռանա:**

Քնարական հերոսը ապրել է խավարի մշտական ներկայության սարսափին ու տառապանքը։ Աղոթքի բարձր խոսքերում լսելի է այն խենթ զգացողության մնչյունը, որ Խավարի մեկնումից հետո լցնելու է նրա սիրտը։

*Մենք խոստանում ենք,  
Եվ մենք խսկապե՛ս,  
Նրան շենք կարող ու շենք մոռանա,  
Միայն թե թող նա թողնի հեռանա...*

Այս աղաշանք-պաղատանքի մեջ, դիմումի այս ձևի մեջ դրված է Խավարից աղատագրվող մարդու երկարատև սպասման երջանկության ու հավատքի դողը։ Եվ եսասիրությունը չէ նրան առաջ մղողը։ Նա ինքը պատրաստ է խավարի հետ մեկնել՝ դառնալով նրա թագավորության «Հին հպատակն ու Նոր քաղաքացին», որովհետև ձեռք բերվածն այնքան մեծ է և այնքան հանուր երջանկության սպասավոր, որ, կարելի է հենց այդպիսի զոհաբերության դիմել։

*Անդարձ կմեկնեմ Խավարի հետ Ես,  
Միայն թե մեր այդ մեկնումից հետո  
Ժամանի ինքը Արշալո՛ւսը,  
Գա՛,*

«Զայնիվ երկրորդ առ Տեր կարդամ» բանաստեղծությունը հիմնարժեք խորհրդանիշերի (Խավար և Արշալույս) վրա չէ, որ կառուցված է, և խնդիրն էլ, ինչպես «Նորօրյա աղոթքում», դուրս է գալիս տվյալ ժամանակի ու տարածության սահմաններից։ Սա ավելի մղվում է ընդհանրական, համաժամանակյա հումանիզմի ոլորտները։ Սա Խավարի ու

Լույսի առճակատումն է, որի մեջ տրված է որոշակի մարդկային ողբերգության ամբողջ համամարդկային հառաջանքը։ Եվ ամբողջ շարքն էլ, և ինչո՞ւ միայն շարքը, ամբողջ գիրքը, գրված է գեղարվեստական ու գաղափարական այս ելակետով։ Պարույր Սևակը նվաճում էր պոեզիայի նորանոր բնագծեր։

Արշալույսի ծնունդով նորածին ալ կարմիր օրը շնչում է, և խոնավ ու տաքուկ այդ շունչը լցնում է համայն աշխարհը, մեր ներքին էությունը՝ հաղորդելով մի սարսուռ ոգեկան, մի թրթիռ անբացատրելի, որ մեզ առնչում է օվկիանոսների անվախճան տուրեառությանը, ինչը, իր հերթին, այլ բան չէ միայն՝ «Քան թե աննշան մեր զարկերակի նշանակալից արձագանքը մեծ Մեզնից սկսվող տարածության մեջ»։

Այդ ներդաշնակությունը, այդ հարթմնի խոնավ ու տաքուկ շունչը, որով լցվում է աշխարհը համայն, այդ աստվածների հետ մարդկանց կապող հսկա թրթիռը, այդ աննշան զարկերակի մեծ արձագանքը—բոլո՞րը, բոլո՞րը արշալույսկող նորածին օրվա երջանիկ ու բարի արդարությունն են բերում։

...Ծնրադրյալ Բնությունն է ելնում ոտի,  
Գիշերային ժամերգությունն է վերջանում,  
Եվ Լուսաբացն է մոտենում դանդաղորեն,  
Իբրև հսկիչ մի Լուսարար՝  
Մարելով ու հանգցնելով  
Ամեն տեսակ լապտեր ու լամպ։

Եվ արեգակն է բարձրանում  
Քրմապետի վսեմությամբ:

Արշալույսն է շարունակում ածել փողն իր  
ծիրանի,  
Որի բոլոր նեղ ծակերից լայն շաղվում է  
ինքը Արդար Արեգակը,  
Եվ հնչում է այն եղանակը պարզ ու բարդ,  
Որ հնչել է աստվածների ծնունդի հետ.  
«Լո՞ւս, լո՞ւս զվարթ»...

**Շաղառուն առավոտի լույս-զվարթն է փառաբանում**  
բանաստեղծը մի արդար ու նախնական հավատով: Երգեցիկ  
ու նվագուն լույս է տենչում բոլորի համար, այս երկրի  
մարդկանց համար բանաստեղծը, գերազանցիկ ու զվարթ  
լույս, որ մաղվում է, շաղվում ու թաղվում այնքան խոր,  
որ նրա շողերի տակ ամեն ինչ դառնում է անկեղծ ու հրա-  
տակ և աշխարհում մնում է միայն մի ստվեր, այն էլ  
երկրի վրա՝

**Լոկ անձրևի ստվերը կոր՝  
Ծիածանը:**

Ցնծուն, ամենաառատ, գահավեժ լուսահեղեղի պատ-  
կերը խորհրդանշական ու միստիկ բան շոնի իր մեջ: Իս-  
կապես դա ազատության համազգացման ու պահանջի հա-  
մարժեքն է, ազատության ու ճշմարտության, արդարության  
ու գեղեցիկի երկրի վրա թագավորելու մեծ երազանքից ու  
գարերի, տասնամյակների, տարիների ընթացքում խեղդ-  
ված լինելու տառապանքից ծնված ճիշը: Լույսը ամենուր է,

լույսը թափվում է վերևից, լույսն իրենով ծածկում է ամեն ինչ, լույսը հոսում է, լիցքավորվելով ավելի առատանում ու հորդանում՝ հեղեղելով ամեն ինչ ու ամենքին:

Բանաստեղծը ոչ մի միստիկական բան չի դնում պատկերների մեջ և ոչ էլ խորհրդանշական ոերուսով (ինչպես այլ բանաստեղծություններում) փորձում է ընթերցողին հաղորդակից դարձնել իրեն համակած ազատության զգայություններին ու տրամադրություններին:

Հստակ, զրնգում, պայծառ, թափանցիկ լուսահեղեղի մեջ ղողանջում է բանաստեղծի տառապանքից հոշոտված ու ազատության բացակայությունից շնչահեղձ սիրտը: Դա, իրոք, նրա սիրտն է զրնգում՝ ցայտեցնելով ճառագայթի մաքրությունը և անապական անմեղությունը:

«Առավոտ լուսո» բանաստեղծության մեջ Պարույր Սեվակը բացատրում է իրեն լուսերգության մղող պատճառները: Պարպելով ամբողջ էությունը, նա իր համար նոր աշխարհ է կառուցում... փորձարկելու համար այդ աշխարհը: «Պատրանազերծ, բայց և հուսազեն» բանաստեղծը դեռ անվավեր ու նոր այդ աշխարհում սովորականի պես ոչ զբաղվում է «շեղածի վրա եղածի թերին իզուր քննելով», ոչ էլ՝ «երազի վրա երեխայքար անուրջ դնելով»: Նա հիմա առնացել է, հասունացել. արթնացել է արդեն և ճարահատու միտումնորեն չի քննում այդ ամբողջ կեղծիքը: Երազից արթնացած՝ նոր արթնացողի պես Զնհալի մի կուց ջրով զովացնում է հիվանդի ճակատը, իսկ հետո բոլոր տեսակի հիվանդների.

**Մարդ լինի, երկիր, թե հավատ—մեկ է:**

Ամենաբուժ սառցաջուրը իր հետքը թողնում է մարդկանց գոց կոպերի, փակ շուրթերի և քնկոտ երեսի վրա։ Այսպես արթնանալով, նա պատրանքի բարձրությունից ցած է գլորվում մինչև այն ստորոտը, «Որից քիչ անդին ճահիճն է ապրում»։ Նրա առաջին խոսքը՝ ամեն ինչի սկիզբն է—«Այք Բեն», քանի որ «Զայքն՝ անսկիզբն ասե զաստուած»<sup>1:</sup>

Այսինքն՝ «Արեգակ»,  
Կամ՝ «Եղիցի լույս»։

Երգեցիկ ու նվագուն լույսի հորդահոս հեղեղի աննյութական կոհակումների մեջ, զվարթ ու գերազանցիկ լույսի մաղվող, շաղվող բարության ու նախնական առաքինության մեջ բանաստեղծը երազում է ծածկված ու թաթախված տեսնել ամեն ինչ. դա սիրո մեջ ծավալվել է նշանակում. դա սիրո մեջ թաթախվել է նշանակում. դա նշանակում է երանության մեջ երջանիկ այն ընկղմվածությունը, որին պետք է մի օր հասնի մարդկությունը։ Սիրո մեջ ու սիրո շնորհիվ, որ լույսն է, մաքրագործվում է ամեն բան, մինչև անգամ «շթրծված ամեն երազ» և երկրագնդի վրա դարձյալ հնչում է աստվածների ծննդի հետ ծնված ազատության նախնական մեղեղին՝ «Լույս, լույս զվարթ»...

Երեկի հենց այս լուսացնցուղի խորհրդանշական անդրադարձն է աշխարհը մաքուր տեսնելու բանաստեղծի պահանջը։

1 Տե՛ս Նոր Բառազիրք Հայկագեան Անգամ, Երևան, 1979, հատ. 1 (Ա-Կ), էջ 79, «Այք» բառհոդվածը։

Աշխարհին, այս՝ մաքրություն է պետք՝  
Այն հերոսների տիսրունակ տեսքով,  
Որոնք մեռնում են... անգործությունից...

Ավելի հուսահատական ու ծանր խոստովանություն՝ գծագրված զարմանալի ճշգրտությամբ՝ դժվար է երևակայել: Սա այն զոհերի շրջանակված դիմանկարն է, որոնք... նահատակվեցին: Առաքինի մարդիկ, քաջ այդ այրերը, այդ անհաղթելի կորյունները մեռան «անգործությունից», որ բաժին էին հանել նրանց օրենքի «պաշտպանները»: Զընդաններում, արևագուրկ ու խոնավ նկուղներում, ջրի կաթոցքի տակ դրած հանճարեղ գլուխները՝ պարտադրեցին աշխարհին անհրաժեշտ մաքրությունը, որ ծիծաղի տեսքով, քնքուշ մեխակի բուրմունքի նման, սոխակի գեղգեղանքի ելեկչումով, սիրո և առաքինության, ճշմարտության ու բարության սերմեր է նետում բորբոսնած աշխարհի անմաքուր ցելերի վրա:

Պարույր Սևակի մտորումները համաշրջանակ ձևեր և բովանդակություն են առնում. բանաստեղծական արտահայտության մեջ, տողի տարօրինակ ու տարողունակ ծալքերում արթնանում են ու դողում գերհագեցած զգացմունքներ, որոնք ծնվել են հին ու դաժան օրերի տառապանքից, վիրավորանքից, նվաստացումից, ինքնահաշոտումից:

Երկրագնդի վրա թափառող ու պատահական մարդը այս բանաստեղծության մեջ գտնում է մի ջերմ սիրտ, որ տրոփում է իր համար, մի հոգի, որ լալիս է հենց իր համար, ու թվում է, թե նրա սիրտն ու հոգին այստեղ է գտել խոստովանանքի մեղմորեն հաշտարար ու վստահելի մի անկյուն,

այստեղ է հավատացել ամենքին և այստեղ է ճառագում բարության ու գթության լույսը։ Տարօրինակ, անհավատալի ինքնապատկեր.

Խելքս հալվում է ոսկորներիս մեջ,  
Հալվում ու հոսում արյան պես անգույն՝  
Իմ ոսկորները դարձնելով ասես սպիտակ երակ։  
Ու ես դառնում եմ... համատարած սիրտ։  
Շարժումներս ամեն՝ սրտի բաբախում,  
Բոլոր ձևերս՝ շարժումներ սրտի...»

...Իսկ դրսում ցուրտ է, դրսում ամպ՝ ու զամպ։ Այս գերզգայուն մարդը, այս համատարած սիրտը անցնում է «անօդ ծառերի» խշորութի միջով, տարանցիկ քամու շրնչառության ու հեռոցի միջով, մինչև որ ծագում է արևը՝ ծագում կեսօրին, և... «աշխարհը ներկում ծաղր ու ծանակով»։ Կրկին ամպերը մատնում—դավում են իրար, անձրեսում է, ահեղ երկինքը նորից պարզերես է դառնում... բայց էլի դարձյալ նույն ժամանակն է ու նույն մթնոլորտը...»

Եվ ժամանակն է կախվում օդի մեջ՝  
Նո՞ւյն Զինգիզ խանի հորդայի նման,  
Նո՞ւյն Լենկ Թեմուրի բանակի հանգույն,  
Ու մորեխի պես միննույն թուրքի։

Այսպես, Զինգիզ խանի պես, Լենկ Թեմուրի նման և ինչպես թուրքը ծանր, անելանելի, բարբարոսական անգթությամբ ու վախով է ծածկվում ամեն ինչ՝ և համատարած սիրտ դարձած մարդը, և, ինչպես բոլորը, մատնվում են կրակի ու հրդեհի դաժանությանը.

Դու ապառնիից մահու չափ հոգնել  
Եվ ապառիկ ես ընդամենն ուզում  
(Պատմություն կոչված անբերրությունից):  
Իսկ ես քեզ ինչպե՞ս ապառիկն այդ տաժ,  
Երբ ինքս եմ ուզում ապառիկ ուզել  
(Իմ մեծահարուստ... համբերությունից):

Սա մի դրություն է, որ վաղուց ծանոթ է քնարական հերոսին: Բարության համն ու հոտը հեռվից է գալիս, և քիչ բան կա նաև ուրիշներին նվիրվելու մեջ: Պատեպատ զարկվելուց արդեն հոգնել է, և անելանելի է նաև ներկա դրությունն էլ: Այն ապաստարանը, որ առաջարկում է քնարական հերոսին բանաստեղծը՝ իր սիրտն է՝ մեծ ու անդավաճան սիրտը, որտեղ նա կարող է հասնել արքայից արքայի տիտղոսին և տեր դառնալ մի զարմանալի առատության, որով լի է բանաստեղծի հոգին: Բայց դրանից ի՞նչ օգուտ: Շահագործվել է երկուսի էլ մեծահարուստ համբերությունը: Ապառնին մահու չափ հոգնեցրել է: Մնացել է թախիծ ու ձանձրույթ, և որովհետև «համբերահատ ու բարկացած» արուներ են, և մութն էլ երազել է տալիս, իսկ իրենք՝ այդ արուները երազել չեն ուզում... Ուրեմն...

Դարձյալ ծնվում է լույսը վառելու պահանջը, դարձյալ «լույս զվարթի» երգեցիկ երազանքն է հավաքում իր փեշերը և խելահեղ ու կորովի շրջապտույտով լուսափայլում շրջապատը.

— Շո՞ւտ վառեցե՞ք լույսերն ամեն...

Եվ սակայն սա միայն առաջարկ է և սպասում առաջարկի կատարման. «Պատացել է մութը արդեն վաղուց»։ Այս քնարական հերոսը մտքի մեջ է երգում «Լույս զվարթն» ու «Առավոտ լուսոն»։ Սա էլ գործ է, անշուշտ, «շատ լուրջ մի գործ» և, ինչպես հավատացնում է բանաստեղծը, «ուժից վեր մի գործ»։ Որովհետև հիմա պետք է հաղթահարվի բութ, խաղաղությամբ մարդուն ճնշող ու մամլող այն զգացումը, որ կապված է «գործի սովի» հետ։ Քիչ է մնում «Հե՛յ-Հե՛յ գոռամ»—սա նույնպես գործ է,—ասում է բանաստեղծը, «Լույս զվարթը» երգելու պես մի գործ։ Բայց գործի սովը՝ պարապությունը երկարում է անընդմեջ... Սրանից ազատում չկա.

Զգիտեմ՝ ինչ անեմ։  
Պատեպատ եմ զարկվում։  
Հազար բան եմ տնտղում՝ կույրի նման,  
Ու հասկացած նրա ինչ—ընշոցը՝ կրկին  
Պատեպատ եմ զարկվում։

Դժվար չէ պատկերացնել պարապության մատնված, ինքնհողոտող այս հերոսի ներքին ողբերգությունը. ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ... փողոցները դատարկ չափչփելուց էլ օգուտ չկա։

Պարույր Սևակը ստեղծում է պարապության թակարդն ընկած մի մարդու անելանելի և հուսահատական դրության պատկերը և դրան շրջափակող զգացմունքների ստույգ տատանումների անդրադարձը մենակյացի հոգում.

**Ես իմ տասը մատով իմ զույգ աշքերի համար  
Բանտի ճաղերի պես ինչ-որ բան եմ սարքում՝  
Ճակատս սեղմելով մտածում եմ,  
Թե ի՞նչ անեմ հիմա։ Եվ բանտային  
Ճաղի արանքներից լուռ հածում է  
Իմ հայացքը տարտամ։**

**Պատկերի այս իրատես գեղանկարչական ճշգրտությու-  
նը անմիջապես ընթերցողին կապում է քնարական հերոսի  
հետ, և ընթերցողն սկսում է ավելի ուշադիր լինել, ձգվում-  
լարվում է հասկանալու համար բանաստեղծի յուրաքանչ-  
յուր բառը և բաժանում է նրան համակած տագնապը։ Այն,  
ինչ անում է այդ հերոսը կամ մտածում, այլ բան չէ, քան  
թե ինքն իրեն զբաղեցնելու մտասեեռումից ծնված լարվա-  
ծության հետեանքը, որ կապույտ հորիզոնի պես ահա բաց-  
վում է լազուրի հանգստավետ ու երանելի զգացողությամբ։  
Նա կենդանանում է, նա սկսում է ապրել այն պահից, երբ  
գտնում է պարապությունն իր միջից դուրս փնչելու ուժը։  
Եվ դա շատ սովորական մի տեսարանի մտաբերումով։**

**Ես հիշեցի հանկարծ, որ առավոտ կանուխ  
Բեռնամեքենայով ձիեր էին տանում։**

**Բանաստեղծական գյուտի անունից են խոսում։ բայց  
չէ՞ որ Պարույր Սևակը գյուտերի հետ գործ չունի. նա ավելի  
նվաճում է գեղարվեստականության այն սահմանը, որ-  
տեղից հնարավոր է ազատ ու անկաշկանդ խոսել ընթերցողի  
հետ։ Նրա ամբողջ տաղանդը, կարելի է ասել, ծախսվում էր  
դրա վրա։ Սևակը հասնում էր անհնարինին՝ գրեթե ասում**

Քր այն ամենը, ինչ մտածում էր և ասում էր ներշնչանքի մեծ ուժով՝ բառի, նախադասության մեջ կուտակելով գեղարվեստական զգացողության և եռանդուժի այնպիսի պաշարներ, որոնք առանձնացվում են իսկական, մեծ ավարտունության և ներդաշնակության հասնելու համար:

Բեռնամեքենայով տարվող ձիերի պատկերը արթնացնում է նաև խղճահարության և ափսոսանքի զգացումներ. Հէ՞ որ ձիերը «իրենց մեջք ու թամբով մարդկային ողջ պատմությունն են կրել» և մարդկային ողջ պատմությունը գրել. բայց հիմա մի փոշտացող մեքենայով քշվում են անհայտ երթով և ասես ժամանակի ծաղրանքով:

Բեռնամեքենայի թափքում՝ ձի՛եր,  
Վախից կծի՛կ դարձած, դողդողացո՞ղ ձիեր,  
Ամեն շրջադարձի ու կեռմանի վրա  
Մե՛զ պես (մարդո՞ւ նման) ճկվո՞ղ-թեքվո՞զ,  
Մե՛զ պես (և ավելի՛) զգուշացո՞ղ ձիե՛ր...  
Ես ձեզ այդ վիճակից ինչպե՞ս հանեմ, ձիեր...

Ասես զուգահեռումը բոլորովին կապ չունի խնդրի հետ, քայց հենց դա է ենթագիտակցության քմահաճույքը կամ այն աշխարհի հնամենի օրինաշափության եղրը, որ անհնարին անհայտությունից դուրս է բերում—կորզում ճրշմարտություն՝ հոգու լարվածության, սեղմված ու ճնշված, ազատության կարոտ զգացումների և կապում դրանք հիմնական մտադրության՝ պարապությունից մարդկանց հանելու, մարդկանց տեղաշարժելու, խանդավառելու, լիցքավորելու այն վրնջացող ուժով ու ամենիությամբ, որ ձիերի

նախիրն ու հոտը իրենց կրակ թափող բերաններով, խրխըն-  
ջացող ու վրնջացող կատաղի ավյունով կարող են ներգոր-  
ծել մարդկանց վրա ու լցվել նրանց մեջ որպես անհնազան-  
դության զգացողություն, որպես կրքի այնպիսի կռւտակում,  
որ կարող է շրջել, հեղափոխել ամեն բան և հետն էլ այդ  
զկրտացող պարապությունը, այդ անդեմ, անորոշ, սարսա-  
փելի հաշտվողականությունը, այդ ստրկական հնազանդու-  
թյունը:

Զիեր տեղափոխելով «իր միջոցով՝ մեր մեջ» բանաս-  
տեղծը հույս ուներ ընթերցողին հասցնել հրավառ այն լաթը,  
որից կբոցավառվեր ամբողջ աշխարհը: Եվ, իրոք, զարմա-  
նալի բան, այն զգացումները, որ հոսում են մարդու մեջ  
«Պարապությունը» կարդալիս, միայն հաճույքի զգացողու-  
թյուններ չեն. դա քառատրոփ արշավող երամակի ընթացքի  
ամեհիությունից դեպի ընթերցողը հոսող ուժի և ըմբուտու-  
թյան միախառն զգացում է, որ լցվում է նրա ներքինը՝  
ներսում ունեցած վրնջացող ու գոփող ձիերի արթուն ու ան-  
հանգիստ, սանձակուոր անհնազանդության փնչոցի ու զայ-  
րույթի հետ միասին, որ ոգևորում է նրան, համակում ուժի  
գիտակցությամբ ամեն ինչ տակնուվրայելու մտադրությամբ  
ու անհամբերությամբ:

Եվ ոտներս, իբրև յուրատեսակ «մեղա»,  
ինձ կտրում են փափուկ մահճակալից,  
Տանում-նստեցնում են ա՛յն աթոռին շորուկ,  
Որի առաջ կա մի... տանջված գրասեղան:  
Տանում-նստեցնում են այդ աթոռին շորուկ,  
Որպեսզի... ե՞ս հիմա ձիեր տեղափոխեմ.

Զիեր տեղափոխեմ իմ միջոցով—ձեր մեջ,  
 Որ խրխնջան նաև ձե՛ր մեջ ձիեր,  
 Որ վրնջան նաև ձե՛ր մեջ ձիեր,  
 Դոփո՞ղ,  
 Բերաններից կրա՞կ թափող  
 Զիեր...

Այսպես է փորձում հաղթահարել բանաստեղծը պատապությունը, որ լայն իմաստով հասարակական գոյավիճակ է, մի դրություն, երբ «անգործությունը», այսինքն մտքի ու հոգու մղավանջային ենթարկվածությունը մի սկզբուն գաղափարի, անշարժությունը, հաշտվողականությունը, նախաձեռնության բացակայությունը, կեղծիքի հետ հաշտվելու և ապրելու ամենօրյա սովորույթն ու գոհությունը մարդուն նետում են մի վիճակի մեջ, որ, ըստ էության, անդեմությունն է, ստրկական ենթարկվածությունը կեղծիքի ու ստի օրենքներին, մոռացումն ու կարոտը այն ամենի, որ թանկ է ու նվիրական յուրաքանչյուր մարդու համար՝ սեփական անձի ճանաշումը, ստեղծագործելու, մտածելու և բարձրածայն ամեն ինչ ասելու, խորհելու իրավունքն ու ազատությունը։  
 «Իր միջոցով՝ մեր մեջ» ձիեր տեղափոխելով, բանաստեղծը ցույց էր տալիս, որ հայացքով զարկվելով խավար պատին և մտքով «կույս զվարթ» և «Առավոտ լուսո» երգելով, խավարը շի փարատվի։ Ոչ միայն պետք է վառել բոլոր լույսերը, այլև համակվել այն ամենի ուժով, որ մեր մեջ փոխադրված ձիերն են ներշնչում։ «Խավարը ոչ ինքն իրեն կփարատվի» (Մ. Նալբանդյան)։ Այդ բոցե բերաններով, այդ կայծակնացայտ սմբակներով ձիերի ներկայությունն ու

վարդը մարդու ներսում կարող են նրան հանել այս անտարք բերության ծովի դեմ, հաղթահարել պարապության սովորույթն ու գոհության վիրավորական մխիթարությունը:

Պատի դեմ ճակատամարտելու պես մի բան է դուրս գալիս, երբ հույսը դնում են կարեկցանքի ու բարության ուժի վրա: Այդ այն ուժն է, որ երբեմն խեղդում է բանաստեղծի մեջ ամեն ինչ և անվերապահորեն նրան հանում հայրենիքի, նվիրվածության և հույսի ափերը: Այո՛, այն հույսի, որի չհամտեսած անուշությանը փորձում է մեզ մասնակից դարձնել բանաստեղծը, այն մտահոգությամբ ու հավատով, թե ելքը, այնուամենայնիվ, գտնվելու է: Այդ հույսը կա, կա բոլորի մեջ և ավշավորվում է ոչ թե «մեր երեկվա և մեր այսօրվա անուժությամբ», այլև մեր մարմնական անաշխատ ծառի մութ աշխատանքով, որ տալիս է՝

*Սիծաղ,  
Ժպի՛տ,  
Գոհությո՛ւն,  
«Եվ փա՛ռք աստծու» գոշելու կարիք....*

Ինչպիսի՞ խորախինդ հրճվանքով է բանաստեղծը խոստովանում, որ «միայն տանջանք-տվայտանքը չէ մեր պահուստը փակ» կամ վշտերը՝ հարստությունը, կամ ելքի փընտըրտուքից գոյացող մտահոգությունը՝ մեր ունեցվածքը՝ Դրանից բացի, երբ համտեսում ենք հույսի «չհամտեսած անուշությունը» մեր աշքերը դառնում են «փեթակ՝ լցված շողերով», ականջները՝ լի «ամեն տեսակ տաք ձայնեղությամբ»:

Եվ փառք աստծու,  
 Որ աղմուկների հասունացումից  
 Թագաղրվում է ոչ թե գիշերը,  
 Այլ օ՞րն է ծնվում:  
 Եվ փառք աստծու,  
 Որ մեր հոգու մեջ,  
 Եթե կա ամիս տերևաթափի,  
 Ապա կան օրեր և աստղաթափի՝,  
 Եվ աստղաթափի...  
 Հազա՞ր բերան փառք:

Այս հավատը, այս համոզվածությունը նման է սառուցի վրա վառած խարույկի: Ճիշտ է, դեռ գետինը հաստասառուցով է ծածկված, դեռ չի զգացվում գարնան տաք օրերի շունչը, բայց, այնուամենայնիվ, կյանքի մտածումով և տրամաբանությամբ ճաշակվում ու թաթախվում ենք հույսի շհամտեսած անուշությամբ և գոնե տաքանում սառուցցի վրա վառած խարույկի լույսով ու շերմությամբ:

Աշխարհի վերանորոգության այս հույսը հառնում է բանաստեղծության այն շղթայից, որ կոչվում է «Եղիսի լույս» և որը հատկապես գրված է, այդ վերանորոգության անհրաժեշտությունն ու կարիքը լնթերցողին հասցնելու այն ժամանակ դեռևս վախենալու շափ անհավատալի, բայց այսօր միանգամայն հասկանալի քաղաքացիական մտահոգությամբ ու դիրքորոշմամբ:

«Ամեն մի ճշմարիտ ու մեծ արվեստագետի մեջ,— գրել է Սևակը,— ննջում է հեղափոխականը: Այսպես դատելով՝ հեղափոխության թեման ոչ միայն բանաստեղծական է,

այլև ինքնին բանաստեղծություն է»<sup>1</sup>: Այս տողերը գրել է Եղիշե Զարենցի 70-ամյակին նվիրված զեկուցման մեջ՝ ինքնարժեքավորելով սեփական բանաստեղծությունը: Զարենցի իսկական հաջորդը լինելով և սերելով նրանից, Պարույր Սևակը ոտից գլուխ հեղափոխական բանաստեղծ էր: Նա արդեն իր երախայրիքներում դրսեռում է իրեն որպես հեղափոխականորեն մտածող բանաստեղծ:

Պիտի ջարդոտեմ ամեն մի կապանք,  
Ամեն մի շղթա՝ հոգիս կաշկանդող,  
Որ կյանքը երգիս մեջ էլ մնա կյանք,  
Որ չլինեն տողեր՝ խոհերըս բանտող...

Հենց սկզբից դիրքորոշվելով դեպի գեղարվեստական ազատությունը և իրականության ճշմարտացի վերարտադրության սկզբունքը, Պարույր Սևակը շատ լավ էր հասկանում, թե ինչ ճանապարհով է ինքը անցնելու՝ հաղթահարելու համար իրականության «անթափանց մղձավանջը» և այն «ծանրասև վարագույրը», որ իրենով ծածկում էր աղքատության, ծով զրկանքների ու անազատության դատապարտված երկիրը: Նա հասկանում էր, որ իրականում կատարվել է մեծ սխալ և, ինչպես որ օրինաշափ է, հեղափոխությունը վերածվել է հակահեղափոխության... Ի վերջո՝ գնդակահարելով քոլոր իսկական հեղափոխականներին, ֆիզիկապես գրեթե ոչնչացնելով բոլշևիկների կուսակցությունը, Ստալինը կուսակցություն էր բերում հեղափոխությունից օգտվող այն «բյուրավոր ու բութ, բյուրավոր ու սուտ» հավատացյալնե-

<sup>1</sup> Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1974, էջ 320:

բին, հրոնք կովում էին ոչ թե գաղափարի ու իդեալի (դրանք արդեն վաղուց էին աղավաղվել), այլ սեփական շահի, բարեկեցության, յուզոտ պատառը զավթելու, գրաված դիրքերն ամրապնդելու համար, երջանիկ ոխակալությամբ բանտերում ու աքսորավայրերում փոտեցնելով բոլոր իսկական հեղափոխականներին, իսկական լենինյաններին, լենինյան գվարդիան։ Դրա հետևանքով օրինականացվեց կուսակցական բյուրոկրատական այն ապարատը, որ միանալով անվտանգության օրգաններին, սրի էր քաշում երկիրը, ամլացնում ստեղծագործական միաքր, տասնամյակներով հետ շպրտում գիտական ու մշակութային դարգացումը Տգետ, անուսում, անգրագիտության վերացման տարիններին միայն գրագիտություն սովորած, այսպես կոչված, «կարմիր պրոֆեսուրան» հասարակական ու գիտական տապարեզից դուրս էր վոնդում գիտության իսկական գործիչներին, մտքի մարդկանց, շնորհալիններին ու տաղանդներին։ Որտե՞ղ էր մնացել սոցիալիզմը, և կար արդյո՞ք այդ ամենի մեջ մի գրան սոցիալիզմ։ Աղավաղելով մարդկային հարաբերությունները, ուսնահարելով համակեցության տարրական նորմերը, այդ սոցիալիզմը ծաղրուժանակի էր վերածում մարքսիզմ-լենինիզմը՝ դուրս բերելով այնտեղից ամենից առաջ հումանիզմն ու բարոյական սկզբունքները։ Երբեք մեր երկիրը այդպիսի ծանր ժամանակներ չէր ապրել։

Պարույր Սևակը համարձակվում էր ենել այդ ժամանակների դեմ, այն սոցիալիզմի, որ մինչև վերջ ապաբարոյականացրել և աղճատել էր այն իդեալները, որոնք իրենց գոյության անհնարինությունը ապացուցել էին արդեն երկրում իշխող տեռորի և վայրագությունների պայմաններում։

Ո՞հ, փշոտ է ճանապարհոյ,  
Քեզ շատ փորձանք կըսպասե,  
Ազատություն սիրողին  
Այս աշխարհը խիստ նեղ է...

ինքն իրեն կարող էր կրկնել Պարույր Սևակը և, ինչպես իր լուսեղեն նախորդը՝ Նալբանդյանը, առաջ մղվել զոհվելու պատրաստակամությամբ ու վճռով։ Այո՛, այդպես էլ նա մտավ գրական ասպարեզ՝ երբեք հաշտության եզրեր շգրտնելով խղճի, արդարության և անարդարության ու կեղծիքի միջև։ Նա, ինչպես երևում է, մի անգամ փորձել էր «անհնարինը հնարավո՛ր դարձնել», բայց ձախողվել էր ու պարտվել։ Ու դրանից հետո, մինչև վերջ, մինչև իր եղերական մահը, մնաց հեղափոխական դիրքերում՝ երկիրը վերանորոգելու, հիմնովին փոխելու տեսակետի վրա։

Իբրև մարդ ու քաղաքացի, նա ամեն ինչ արեց ժողովրդին մերձեցնելու այն հեղափոխական գաղափարներին, որ քարոզում էր բանաստեղծությամբ, հրապարակախոսությամբ, գիտական աշխատություններով։ Սակայն նրա դեմ կանգնեցին ճշմարտության, բարոյականության, հումանիզմի թշնամիները։ Ամբողջ ժամանակ ոչ միայն պետական պաշտոնական հիերարխիան վախեցած ու ահաբեկված էր նրանից, այլև իրենք՝ որոշ գրշակից ընկերները, որոնք այսօր էլ դեռ շեն դադարել ծուռ նայել Սևակի պոեզիային<sup>1</sup>։ Գրա-

1 «Գարունում» (1988, № 2) «Ավանդույթ և արդիականություն» հոդվածի հեղինակը դուրս է թողել 1950—60 թվականների գրական շարժումից ու ընթացքից Պարույր Սևակի անունը. ոչ միայն դուրս է թողել, այլև անգիտանում է նրա գոյությունը, որպես 50—60-ական թվականների հայ բանաստեղծական լեզվի աննախադեպ մշակողի։

Գան պահպանողականությունը, որ հրամայական դիրքեր ուներ այդ տարիներին և որի ձեռքում էր ամբողջ «իշխանությունը», Սևակի պոեզիայում բնագդաբար զգում ու տեսնում էր իր հակառակորդին։ Բանաստեղծը ելել էր կտրելու այն պոեզիայի երակը, որ տասնամյակներ շարունակ տարածում էր ստահող փառաբանություն ու կեղծիքի վարակ, ամենաանսքող երեսպաշտություն և նույնքան կեղծաբարո քծնանք։ Գովեստագրության մի տեսակը, որ շողոքորթության ու ստրկահաճության ոչ մի սահման չի ճանաչում, առաջնորդի ու նրա գործի տիեզերածավալ մեծարանք ու ծնծղաթմբկային խանդավառափառաբանություն, սնամեց ու անհող մեծարանք այն ամենի, ինչ հենց կազմում են մեր կյանքի թրշվառությունը (որովհետև ուրիշ այլ անուն չէր կարելի տալ ամեն ինչից զուրկ՝ նյութական, թե բարոյական իմաստով, մեր ժողովրդի կյանքին):

\* \* \*  
Կեղծիքի ու վերագրումների այդ գրականությունը ի պիմս Պարույր Սևակի, գտավ իր ամենաանհաշտ հակառակորդին։ Պարույրը ոչ միայն մերժում էր այն ու պախարակում, այլև առաջարկում էր ճիշտ ապրելու և ճշմարտության ճանապարհը բոնելու փրկարար վերափոխության ուղին։ Նրա պոեզիան ժամանակակիցներից շատերը սկզբում փորձում էին շհասկանալ (որպես թե շատ էր բարդ), հետո խոր-

---

Պարույր Սևակի բանաստեղծական լիցուն, որ թերես ամենահարուստն է ամբողջ հայ պոեզիայում (տե՛ս բանաստեղծի լեզվական մշակույթին նվիրված Արտաշես Պապոյանի հետազոտությունները, եռահատոր բառարանը և դոկտորական դիսերտացիան) ավանդույթների և արդիականության անունից խրթնաբանող այսպիս կոչված քննադատը, հիշատակության անգամ չի արժանացնում։

Հում էին, թե Պարուցին հետևելով իրենք կվտանգեն իրենց հեղինակությունն ու համբավը, ի վերջո եկան այն համոզման, որ նրա առաջարկած վերափոխման ու նորոգման, նորացման ու նորարարության էությունը պոեզիայում հակառակ է ավանդականին ու, թերևս, այդ պատճառով, անընդունելի:

«Հասարակությունը, — ասել է Սոմերսեթ Մոեմը, — սիրում է նորը, բայց այն ժամանակ միայն, եթք համապատասխանում է հին ըմբռնումներին, եթք նա հուզում է, բայց ոչ անհանգստացնում»։ Պարուցր Սևակի պոեզիան անհանգստացնում էր։ Դա այն նորն էր, որ գալիս էր ոչ միայն և ոչ այնքան ժխտելու հինը, որքան հաստատելու նորը՝ այն, ինչ հեռացնում էր «անթափանց մղձավանջից» և հնարավորությունն էր տալիս պոեզիա ներբերել մարդկային ճշմարիտ ապրումը, որից բարձրանում էին կեղծիքն ու վեհերոտությունը թոթափած, առօրյա, սովորական, ամենաճշգրիտ զգայությունները։

Պոեզիան բացում էր իր ուժեղ ու մկանուտ թևերը՝ գիրկն առնելու հալածված ու հետապնդված ճշմարտությանը։

Պարուցր Սևակի դեմ իսկական գրական արշավանք կազմակերպվեց։ Ճիշտ է, ընդունում էին նրա օժտվածությունը, տաղանդավոր լինելը, բայց մերժում էին նրա նորարարությունը որպես թե նրա բանաստեղծությունը՝ հանելուկային և երեմն նույնիսկ ոեթուսային իր արտաքինով, հարում էր գրական «ստիլյագությանը» և ծանրացած էր անորոշության ու ոացիոնալիզմի թանձր շերտերով։

Մի քննադատ նույնիսկ նրա ստեղծագործական մեթոդը զուգահեռեց կլասիցիզմի հետ։ Մի ուրիշ քննադատ նրա բանաստեղծական շարքերից մեկը («Վերնագիրը վերջում») գրական խոտան համարեց։ Այդ նույն քննադատը «Երգ երգոց» պոեմը համարում էր անբարոյական գրվածք։ Ուրիշները հարձակվում էին դասական բանաստեղծության օրենքները իբր թե շրջանցելու, բանի տեղ չդնելու և անհասկանալի լինելու համար։ Քննադատների մի այլ խումբ մեղադրում էր Սևակին բանաստեղծությունը շարդելու, երբեմն էլ «անբանաստեղծական» դարձնելու, ասես, միտումնավոր դիրքորոշման համար։ Վերջապես կանոնիկ, դասական հանգավորումը որպես թե շրջանցելու և իբր թե ֆոլկլորային մտածողությունից հրաժարվելու համար։ Էլ ինչի՞ մեջ ասես չէին մեղադրում նրան։

Իհարկե սարսափով էին նայում այն ամենին, ինչ նա գրել էր «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմում։ Նույնիսկ իրենք իրենց չէին խոստովանում, երբ ընթերցում էին տողեր և առնչվում բանաստեղծական սլատկերների, որոնք մերկացնում էին մեր երկրի մոտիկ անցյալի համապատկերը։ Դա պահվում էր լուսնաթյան ու գաղտնիքի մեջ։ Ես հիշում եմ միայն մի քանի դեպք, երբ այդ տարիներին նրան մեղադրեցին գաղափարական անհավատարմության մեջ։ Մի վայ քննադատ 1967 թվականին, երբ Պարույր Սևակը արդեն գրել էր այն ամենը, ինչ այսօր մեզ հայտնի է նրա երկերի վեցհատորյակի տեսքով, լրջորեն կշտամբում էր բանաստեղծին, թե նա իբր դեռ չի հասել «համանվագային պոեզիային» (սա Պարույրի արտահայտությունն է)։ Ընդ որում, երեսպաշտ այդ քննադատը, որ հիսունական թվա-

կաններին նույնքան ձեռներեցությամբ բանաստեղծին մեղադրել էր քաղաքական սայթաքումների ու անհավատարմության մեջ, չեր էլ հասկանում, որ այդ համանվագայինը վաղուց էր նվաճվել Պարույրի եղակիորեն անկրկնելի բանաստեղծական ներշնչանքներում:

Մի խոսքով, գրական մթնոլորտը թաքուն, թե բացահայտ թշնամանք էր արտաշնչում՝ անընթափանակ, հետամնացության թշնամանք, որ բանաստեղծին հարկադրում էր ոչ միայն անքուն գիշերներ լուսացնել ու ոգեկան անասելի տառապանքներ կրել, այլև մարդկայնորեն հուսահատվել և երբեմն լաց լինել անզորությունից և անօգնականությունից:

Եվ սակայն նա երբեք չեր հուսահատվում, նույնիսկ մարդկանց մի այսպիսի «անվնաս» խորհուրդ էր տալիս...

Այնտեղ, որտեղ ինձ դուք չեք համըզգա,  
Այնտեղ, որտեղ ինձ չեք համաձայնի,  
Չշտապեք, խնդրեմ, իսկույն համարել  
ուղեղի քաղհան  
կամ սրտի բորբոս:

Մտածեք նաև ձեր որդո՞ւ մասին,  
Խոսում եմ նաև նրա՛ անունից:  
Դուք գնալու եք,  
Իսկ նա գալո՞ւ է:

Որքան մեծ էր բանաստեղծի հավատը սեփական սրխուրանքի, իր պոեզիայի հաղթանակի հանդեպ: Դա հավատ էր ճշմարտության հանդեպ: Ի վերջո, պետք է հաղթանակեր այն, չեր կարող չհաղթանակել: Ընդ որում, եթե ներկա սե-

քունդը կարող էր չհասկանալ իր բանաստեղծության հեղափոխական կրքոտ լիցքը, ապա պետք է, որ շփակեր դրա հանապարհը իսկ պաշտոնական քննադատներից շատերը իսկապես ճգնում էին շտեսնելու ու ու վալ (վախենալով) Սևակյան պոեզիայի հենց այդ երակը։ Պարույրի մահից հետո միայն կարողացան ուրվագծել նրա գրապատմական վիթխարի դերը արդի գրական զարգացման և հայոց բազմադարձան գրականության պատմության մեջ։

Պարույր Սևակը շատ լավ էր հասկանում, որ, այո՛, գրում է «եկող» այսինքն այսօրվա սերնդի համար, այն մարդկանց համար, որոնք ելել են վերափոխելու սոցիալիզմը, վերանորոգելու մեր մարդկային հարաբերությունները և գրանք կառուցելու ճշմարտության ու հումանիզմի հատակագծի վրա։ «Բանաստեղծը ճշմարտության որոնող է, — գրել է Պարույր Սևակը, — և դա վաղուց է ասված, բայց ավելին, ոչ միայն որոնող, որ կրավորականություն է ենթադրում, այլև դարբնող, որ կյանքին նվիրաբերում է պարտադրում։ Առանց դրա բանաստեղծ ոչ եղել է, ոչ էլ կլինի»<sup>1</sup>։ Սևակը միանգամայն իրավացի էր։ Նա հենց այդպես էլ ապրեց և մասնակից դարձավ մեր կյանքի ամենօրյա հոգսերին, Հոգևոր առողջացմանը, երբեք շտանձնելով որևէ կրավորական դեր։ Նա միշտ առաջ էր մղվում ինքնազո՞ւաբերման պատրաստակամությամբ։ Նրա կյանքը եղավ իսկական անմնացորդ նվիրաբերում իր հայրենիքին ու ժողովրդին։

---

1 Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, Երևան, 1974, համ. 5, էջ 390—391։

Մեր մեծ Վարպետը՝ Մարտիրոս Սարյանը, Սևակի հանկարծական ու եղերական կործանումից կայծակնահար, հունիսի 17-ին մի քանի տող է գրել. «Ժողովուրդը քեզ ծնեց մաքառման գնով, ծնեց ժամանակին, որպեսզի քո միջոցով երգեր իր ցախ ու ուրախությունը։ Այդպիսի անհատներին ժողովուրդը հեշտությամբ չի ծնում և չի կարող հեշտությամբ բաժանվել նրանից։»

Պարույր, սիրելի զավակս, դու շատ լավ գիտեիր այս բոլորը և գիտեիր, որ դու միայն քոնք չես։ Դա պիտի գիտակցեն շատերը. դա պիտի լինի մեր առաքելությունը. մեր մտածողության արմատը։ Եվ ճակատագիրը այնքան դաժան չպիտի լիներ քո հանդեպ, ժողովրդի հետ։ Վարպետի այս խոսքերի մեջ մեր ժողովրդի ընդհանրական գիտակցության կարևոր մի ըմբռնման ձևակերպումը կա, այն, որ Սևակը մեր մտածողության արմատն է, և որ ժողովուրդը նրան ծնել է մաքառման գնով։

Այո՛, այսօր, հեղափոխական վերակառուցման այս օրերին, մենք դարձյալ պիտի դիմենք Պարույր Սևակի ազնը-վությանն ու ճշմարտասիրությանը, մաքրագործվենք նրա բանաստեղծությամբ, ինչպես ծովն է ինքն իրեն մաքրում և այդ վիթխարի, ալիքավորվող մակընթացության ու տեղաշտրվության խառնարանում, հասկանանք ու ըմբռնենք, որ ճշմարտություն ասելու համար անհրաժեշտ է իսկական խիզախում, սիրանք՝ այնպիսին, ինչպիսին գործեց մեծ բանաստեղծը 50—60-ական թվականներին՝ մեր գրականությունը, հասարակական միտքն ու խիզը փորձելով ազատագրել ահավոր և անպատիկ ստրկամտությունից ու նույնքան գա-

■ ապարտելի վախկոտությունից, ամբողջ հասակով նետվե-  
ռք մարտի անհավասար ուժերի դեմ, համոզված լինելով,  
■ զնում է ստույգ գոհվելու ապագայի մարդկանց ազատու-  
թյան ու երջանկության համար:

Կարլեն Արտաշեսի Դանիելյան  
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԽՐԱՆՔԸ

Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. Հակոբյան  
Նկարիչ՝ Ա. Վ. Պողոսյան  
Գեղ. խմբագիր՝ Վ. Ք. Մանդակունի  
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Խաչատրյան  
Վերստ. սրբագրիչ՝ Լ. Վ. Նիկողոսյան

ИБ № 2896

Հանձնված է շարվածքի 21. 08. 89թ : Ստորագրված է տպագր. Յ. 11. 89թ.  
ՎՖ 00143 Զափար 70×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ տպ. № 2: Տառատեսակը՝ գրքի  
սովորական: Տպագրությունը՝ բարձր: Պայմ. 4,02 մամ., տպ. 4, 22, դուն.  
թ. օտ : Հրատ. 2,87 մամ.: Տպագանակ՝ 10000: Պատվեր 534: Գինը 20 կոպ.:

«Լույս» հրատարակություն, Երևան—9, Կիրովի 19ա:

Издательство «Луис», Ереван-9, ул Кирова 19а.

ՀԽՍՀ ԳԱ հրատարակության Երևանի տպարան,  
Մարշալ Բաղրամյանի պ., № 24:

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,  
пр. Маршала Баграмяна, 24.

